



Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
9 դեկտեմբերի 2018թ.

ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելություն  
Վերջնական զեկույց



Վարչակա  
7 մարտի 2019թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ..... 1

II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ ..... 5

III. ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ ..... 7

IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ ..... 8

V. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ..... 9

VI. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ..... 10

    A. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ..... 10

    B. ՍՏՈՐԻՆ ՕՂԱԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ..... 12

VII. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ..... 13

VIII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ ..... 15

IX. ՔԱՐՈԶԱՐՇԱՎ..... 16

X. ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ..... 20

XI. ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ..... 23

    A. ԶԼՄ ՄԻՋԱՎԱՅԻՐ..... 23

    B. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ..... 24

    C. ԶԼՄ ՍՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ..... 26

XII. ԴԻՍՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ ..... 28

XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ..... 30

XIV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ ..... 31

    A. ՄԵԿՆԱՐԿ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ ..... 31

    B. ԶԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄ ..... 34

XV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ..... 36

XVI. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ..... 38

    A. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ..... 38

    B. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ..... 40

ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ..... 43

ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ  
    ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ..... 44

ԺՀՄԻԳ-Ի ՄԱՍԻՆ..... 51

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**  
**9 դեկտեմբերի 2018թ.**

**ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության վերջնական զեկույց<sup>1</sup>**

**I. ԳՈՐԾԱԴԻՐ ԱՍՓՈՓՈՒՄ**

Հայաստանի Հանրապետության նախագահի հրավերով, և իր մանդատին համապատասխան՝ ԵԱՀԿ Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) Ընտրությունների դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ) գործուղեց 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների համար: Ընտրությունների օրը ԺՀՄԻԳ ԸՄԴԱ-ին միացան ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունները՝ կազմելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ):

Դեկտեմբերի 10-ին հրապարակված «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությունը» գտել էր, որ ընտրություններն «անցկացվել են հիմնարար ազատությունների պահպանմամբ և վայելել են հանրության լայն շրջանակների վստահությունը, ինչը պետք է պահպանվի ընտրական հետագա բարեփոխումների միջոցով: Քաղաքական բաց բանավեճը, այդ թվում՝ ԶԼՄ-ներում, նպաստել է աշխույժ քարոզարշավի անցկացմանը՝ չնայած առցանց սադրիչ հռետորաբանության դեպքերը մտահոգության տեղիք են տվել: Կանխամտածված ընտրախախտումների, այդ թվում՝ ընտրակաշառքի և ընտրողների վրա ճնշումների ընդհանուր բացակայությունը իրական մրցակցության հնարավորություն է ընձեռել: Քարոզարշավի ֆինանսավորման ամբողջականությունը խաթարվել է կարգավորման, հաշվետվողականության և թափանցիկության պակասի պատճառով: Չնայած կարճ ժամկետների՝ ընտրությունները լավ էին կազմակերպված: Ընտրությունների օրն անցել է հանգիստ և խաղաղ, որի բոլոր փուլերը դրական են գնահատվել ԸՄԴԱ գրեթե բոլոր դիտորդների կողմից, ովքեր նաև նշել են ընթացակարգերի հետ ընդհանուր համապատասխանության մասին»:

Ընտրությունները համապարփակ ձևով կարգավորվում են սահմանադրությամբ և 2016թ. ընտրական օրենսգրքով: Ընտրական օրենսդրության 2018թ. մայիսի փոփոխություններով ընդլայնվել է այն անձանց ցուցակը, որոնց արգելվում է քարոզչություն իրականացնել, վերացվել են ԶԼՄ ներկայացուցիչների նկատմամբ սահմանափակումները և խստացվել կամ ներմուծվել են պատժամիջոցներ և տույժեր ընտրական հանցագործությունների համար՝ համաձայն ԺՀՄԻԳ և «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) նախկին հանձնարարականների: ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի մի շարք այլ հանձնարարականներ դեռևս մնում են չկատարված, այդ թվում այնպիսիք, որոնք վերաբերում են քարոզարշավի ֆինանսավորման կանոնակարգումներին, ընտրական վեճերի հետ կապված բողոք

<sup>1</sup> Սույն զեկույցի անգլերեն տարբերակը միակ պաշտոնական կապալիցում է: Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանություն:

բերելու իրավունքի սահմանափակումներին և թեկնածուների քաղաքացիության հետ կապված պահանջներին: Ընտրություններից կարճ ժամանակ առաջ կառավարությունը նախաձեռնել էր ընտրական օրենսգրքի բարեփոխում՝ փորձելով զգալի փոփոխություններ մտցնել ընտրական համակարգում և ընտրությունների այլ ասպեկտներում: Ազգային ժողովը չհաստատեց առաջարկվող փոփոխությունները:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ Ազգային ժողով անցնում են առնվազն 101 պատգամավորներ երկաստիճան համամասնական ընտրակարգով՝ մեկ փակ համապետական ցուցակով և 13 բաց տարածքային ցուցակներով: Ի հավելումն դրա, լրացուցիչ չորս մանդատ է հատկացվում վերջին մարդահամարի տվյալներով ամենամեծ մշտական բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններին: Եթե հաղթանակած կուսակցությունը կամ դաշինքը ստանում է սկզբնական 105 մանդատների երկու երրորդից ավելին, խորհրդարան անցած ընտրապայքարի մյուս մասնակիցներին տրամադրվում են լրացուցիչ մանդատներ՝ միասնաբար մեկ երրորդի փոքրամասնություն կազմելու համար: Այս ընտրություններից հետո հատկացվել են ընդհանուր թվով 27 լրացուցիչ մանդատներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) իր աշխատանքը կատարել է արհեստավարժ կերպով ու թափանցիկության պայմաններում և պահպանել է օրենքով սահմանված բոլոր ժամկետները՝ չնայած ժամանակի սղությանը: ԿԸՀ-ն և Տարածքային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) վայելում էին ընտրական շահառուների վստահությունը: Մինչ ԿԸՀ բոլոր որոշումները հրապարակվել են սահմանված ժամկետներում, ՏԸՀ որոշումներն ընտրությունների ժամանակահատվածում առցանց չեն հրապարակվել: ԿԸՀ-ն իրականացրել է ընտրողների ուսուցման համապարփակ արշավ՝ քաջալերելով քվեարկության մասնակցությունը, բացատրելով քվեարկության ընթացակարգերը և նախազգուշացնելով ձայների առքուվաճառքի արգելքի մասին: Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) կազմավորվել են օրենքով սահմանված ժամկետներում: ԸԸՀ վերապատրաստումները ընդհանուր առմամբ գնահատվել են դրական: Այնուհանդերձ, ընտրությունների արդյունքների ամփոփման արձանագրություններում նկատվել են բազմաթիվ տեխնիկական սխալներ, ինչը մատնանշում է, որ այս մասով հետագա ուսուցման կարիք կա:

ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցներից շատերն ընդհանուր առմամբ վստահություն են հայտնել ընտրողների ցուցակների ճշգրտության նկատմամբ: Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը շարունակական ջանքեր է ձեռնարկել ընտրողների տվյալները թարմացնելու ուղղությամբ: Ընտրողները ողջամիտ հնարավորություն են ունեցել դիմելու ցուցակներում ուղղումներ կատարելու կամ քվեարկությանը մասնակցելու նպատակով ըստ ժամանակավոր բնակության վայրի գրանցվելու համար: Ընտրությունների օրը ընտրողների նույնականացումն արվել է ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումների միջոցով՝ բազմակի քվեարկության կանխարգելման նպատակով: Օրենքի պահանջի համաձայն, և չնայած տվյալների գաղտնիության մասին մտահոգություններին՝ ԿԸՀ-ն առցանց հրապարակել է քվեարկությանը մասնակցած բոլոր ընտրողների ցուցակները՝ անձնական տվյալներով և ստորագրություններով: Դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձինք չունեն ընտրելու իրավունք, ինչը հակասում է հաշմանդամություն ունեցող անձանց քաղաքական իրավունքների ոչ ողջամիտ սահմանափակումների վերացման մասին միջազգային պարտավորություններին:

Ներառական և թափանցիկ գործընթացում ԿԸՀ-ն գրանցել է հայտ ներկայացրած բոլոր ինը կուսակցությունների և երկու կուսակցությունների դաշինքների ընտրացուցակները: Թեկնածուները պետք է լինեն բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ և բնակիչներ նախորդող չորս տարիների ընթացքում: Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրվելու իրավունքի սահմանափակումները հակասում են ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին:

Կանայք մնում են թերներկայացված քաղաքականության մեջ: Քաղաքական կուսակցությունները գրանցել են կին թեկնածուների ընդհանուր թվի 32 տոկոսը, իսկ նորընտիր Ազգային ժողովում պատգամավոր կանայք կազմում են 24 տոկոս: Կուսակցությունները հազվադեպ են կին թեկնածուներին դարձրել իրենց քարոզարշավի կենտրոնական դեմք: Կանայք շատ քիչ դեպքերում են քարոզարշավ իրականացրել միայնակ և հազվադեպ են ելույթով հադես եկել քարոզարշավային հանրահավաքներում: Որոշ կին թեկնածուներ իրենց սեռով պայմանավորված դարձել են նաև ստորացնող հռետորաբանության թիրախ:

Կուսակցություններն ու դաշինքները հնարավորություն են ունեցել ազատ քարոզարշավ իրականացնել. միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների, արտահայտման և տեղաշարժի հիմնարար ազատությունները լիարժեք կերպով հարգված են եղել: Քարոզարշավի պաշտոնական ժամկետը կարճ էր, սակայն քարոզչությունը սկսվել էր ավելի վաղ, ինչն արգելված չէ օրենքով: Քարոզարշավի ընթացքում արձանագրվել են ապատեղեկատվության տարածման դեպքեր, ինչպես նաև սոցիալական ցանցերում ընտրապայքարի որոշ մասնակիցների միջև ագրեսիվ և թեժ փոխանակումներ:

Վարչական ռեսուրսի չարաշահման և պետական ծառայողների վրա ճնշումների կանխարգելման նպատակով իշխանությունները համապատասխան արգելքների մասին իրազեկման բարձրացում են իրականացրել ՏԻՄ և այլ պաշտոնյաների շրջանում: Իշխանությունների, ընտրապայքարի մասնակիցների և անձամբ ընտրողների մոտ առկա էր մեծ քաղաքական կամք՝ չքաջալերելու ընտրակաշառքի կիրառումը: Դրական է, որ ընտրական շահառուներն ընտրակաշառքի կիրառման կամ այլ ընտրական խախտումների սիստեմատիկ փորձերի մասին հաղորդումներ չեն ներկայացրել: Մի շարք ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցներ պնդում էին, սակայն, որ տեղի էր ունեցել որոշ քարոզարշավի աշխատողների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դիտորդների ներգրավում կարճաժամկետ աշխատանքային պայմանագրերի մեջ, հիմնականում մեկ կուսակցության կողմից, նրանց ձայները անուղակի կերպով գնելու նպատակով:

Նախընտրական հիմնադրամը կարող է ներառել դրամական մուծումներ և ապրանքների ու ծառայությունների տեսքով նվիրատվություններ ընտրողների, թեկնածուների և քաղաքական կուսակցությունների կողմից՝ թե՛ մուծումների, և թե՛ ծախսերի համար առավելագույն շեմերի կիրառմամբ: Նախքան քարոզարշավի պաշտոնական մեկնարկը ստացած և ծախսած միջոցների մասին հաշվետվություն ներկայացնելու հստակ օրենսդրական պահանջներ չկան, ինչն առավելություն է տալիս կայացած քաղաքական կուսակցություններին և նվազեցնում է քարոզարշավային միջոցների թափանցիկությունը:

Որոշ թեկնածուներ շրջանցել են օրենքը՝ չօգտագործելով իրենց առաջադրած կուսակցության կամ դաշինքի նախընտրական հիմնադրամը: Չնայած ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին՝ կազմակերպչական ծախսերը, ինչպիսիք են օրինակ գրասենյակային տարածքների, հաղորդակցման, փոխադրման և աշխատակազմի վարձերի վճարները, չեն համարվում քարոզարշավային և ուստի կարող են չներառվել հայտարարագրերում՝ այդպիսով կասկածի տակ դնելով հաշվետվության համակարգի արժանահավատությունը և ընտրական շահառուներին հասանելի տեղեկատվության թափանցիկությունը:

Մահմանադրությամբ երաշխավորված արտահայտվելու ազատությունը հարգվել է: Մինչ հեռուստատեսությունը քաղաքական տեղեկատվության հիմնական աղբյուրն է, առցանց լրատվական կայքերի և սոցիալական ցանցերի դերակատարությունը բարձրացել է: ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից մշտադիտարկված հեռարձակողներն ընդհանուր առմամբ լուսաբանել են ընտրապայքարի բոլոր մասնակիցներին՝ նպաստելով տեղեկացված ընտրություն կատարելու համար ընտրողներին հասանելի տեղեկատվության բազմազանությանը: Այնուհանդերձ, բազմաթիվ մասնավոր լրատվամիջոցներ քաղաքական կուսակցությունների հետ սերտորեն փոխկապակցված են թվում, իսկ դրանցից մի քանիսը ցուցաբերում են հստակ նախապատվություն: Հանրային հեռուստատեսությունը պաշտոնական քարոզարշավի ընթացքում իրականացրել է ողջամտորեն հավասարակշռված լուսաբանում: Դրական է, որ Հանրային հեռուստաընկերությունը և մի շարք այլ լրատվամիջոցներ կազմակերպել են իրական բանավեճեր՝ ներգրավելով թեկնածուներ ընտրապայքարին մասնակցող բոլոր կուսակցություններից ու դաշինքներից:

Չնայած ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին և միջազգային լավ գործելակերպին՝ ընտրական գործընթացին առնչվող դիմում-բողոքների ներկայացման իրավունքը սահմանափակ է և հիմնականում վերապահված է վստահված անձանց ու թեկնածուներին: Մինչ բողոքների ներկայացման և քննման օրենքով սահմանված ժամկետներն ընդհանուր առմամբ ողջամիտ են, առկա են ժամանակային համընկնումներ ՏՀՀ-ների կողմից հետընտրական շրջանի բողոքների վերաբերյալ որոշումներ ընդունելու և այդ որոշումները ԿՀՀ բողոքարկելու ժամկետներում, ինչը մտահոգիչ է:

Օրենքը թույլատրում է տեղամասային կենտրոնում դիտարկում իրականացնել միջազգային և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դիտորդներին, ԶԼՄ-ներին և վստահված անձանց ու ընտրապայքարի մասնակիցներին: ԿՀՀ-ն գրանցել է ընդհանուր թվով 17.813 դիտորդներ քաղաքացիական հասարակության 22 կազմակերպություններից: Թեև կայացած և փորձառու ՔՀԿ-ների կողմից առկա էր ընտրությունները դիտարկելու իրական ջանք՝ ԺՀՄԻԳ ԸԴԱ մի շարք գրուցակիցների կողմից հնչել են մտահոգություններ առ այն, որ որոշ հավատարմագրված ՔՀԿ դիտորդների և քաղաքական կուսակցությունների միջև առկա է ուղղակի, այդ թվում պայմանագրային փոխկապակցվածություն, ինչը կարող էր կասկածի տակ դնել նրանց անաչառությունը: Ընտրությունների օրը տեղամասային կենտրոններում ՔՀԿ դիտորդների հարաբերականորեն փոքր թիվը՝ համեմատած հավատարմագրված դիտորդների թվի հետ, խոսում է այն մասին, որ ոմանց մոտ առկա է ընտրությունների օրվա գործընթացներին հետևելու իրական հետաքրքրության կամ մտադրության պակաս:

Ընտրությունների օրն անցել է հանգիստ, խաղաղ և առանց ընտրողների նկատմամբ ճնշումների ու ահաբեկումների: ԸՄԴԱ դիտորդները մեկնարկի և քվեարկության գործընթացը դրական են գնահատել դիտարկված գրեթե բոլոր տեղամասային կենտրոններում, ինչը խոսում է այն մասին, որ ընտրական ընթացակարգերը պահպանվել են ԸՀ-ների կողմից: Այնուհանդերձ, դիտարկված տեղամասային կենտրոնների համարյա երեք քառորդը հասանելի չէր տեղաշարժման դժվարություններ ունեցող անձնաց համար: ԸՄԴԱ-ն ձայների հաշվարկը դրական է գնահատել դիտարկված բոլոր տեղամասային կենտրոններում, բացի երկուսից: Նկատվել են վստահված անձանց և դիտորդների կողմից միջամտության առանձին դեպքեր: Աղյուսակավորման գործընթացը դրական է գնահատվել գրեթե բոլոր ՏՀ-ներում՝ չնայած որոշ կազմակերպչական թերություններին և ԸՀ արձանագրություններում բազմաթիվ մանր վրիպակներ ուղղելու անհրաժեշտությանը:

Ընտրական վարչարարության մարմիններն ընտրությունների օրվա խախտումների առնչությամբ ստացել են սահմանափակ թվով բողոքներ: Մասնավորապես ՏՀ-ները բողոքները քննելիս ակտիվորեն խորհրդակցել են ԿՀ-ի հետ: ՏՀ-ները ձայների վերահաշվարկ են իրականացրել 57 տեղամասային կենտրոններում և՛ ընտրապայքարի մասնակից կուսակցությունների ու դաշինքների դիմումների հիման վրա, և՛ սեփական նախաձեռնությամբ: Հայտնաբերված սխալները եղել են չնչին և չեն ազդել Ազգային ժողովում մանդատների բաշխման վրա: ԿՀ-ն ընտրությունների արդյունքներն ամփոփել է դեկտեմբերի 16-ին: Ընտրապայքարի մասնակիցներից և ոչ մեկն ընտրությունների արդյունքները չի բողոքարկել սահմանադրական դատարան:

Սույն զեկույցը ներկայացնում է հանձնարարականներ ի աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացը ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորությունների ու չափանիշների հետ ներդաշնակեցնելու ջանքերի: Առաջնահերթ հանձնարարականները վերաբերում են ընտրական գործընթացի արդարության նկատմամբ վստահության ամրապնդմանը, ընտրական օրենսդրության բացերի և երկիմաստությունների վերացմանը, ընտրողների անձնական տվյալների պահպանմանը, կանանց քաղաքական գործընթացներին մասնակցության խթանմանը, հաշվետվողականության և քարոզարշավի ֆինանսավորման մասին հաշվետվությունների բարելավմանը, ԶԼՄ խմբագրական անկախության աջակցմանը և ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովների վերապատրաստումների բարելավմանը: ԺՀՄԻԳ-ն իր պատրաստականությունն է հայտնում աջակցել իշխանություններին ընտրական գործընթացի բարելավման և սույն ու նախկին զեկույցներում տրված հանձնարարականների կատարման հարցում:

## II. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ԽՈՍՔ

Ի հետևումն Հայաստանի Հանրապետության նախագահի՝ 2018թ.-ի դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրությունների դիտարկում իրականացնելու հրավերի և հոկտեմբերի 23-ից 25-ն իրականացված Կարիքների գնահատման առաքելության հանձնարարականների հիման վրա, ԺՀՄԻԳ-ը Ընտրությունների դիտորդական

առաքելություն (ԸԴԱ) գործուղեց նոյեմբերի 12-ին: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն՝ դեսպան Ուրշուլա Գացեկի գլխավորությամբ, կազմված էր Երևանում տեղակայված 14 փորձագետներից և 24 երկարաժամկետ դիտորդներից, որոնք նոյեմբերի 18-ից գործուղվել էին Հանրապետության ողջ տարածք: Առաքելությունը մնաց Հայաստանում մինչև դեկտեմբերի 19-ը՝ հետևելու հետընտրական զարգացումներին:

Ընտրությունների օրը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին միացան ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Եվրոպական խորհրդարանի պատվիրակությունները՝ կազմելով Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելություն (ԸՄԴԱ): Պետեր Օսուսկին ԵԱՀԿ գործող նախագահի կողմից նշանակվել էր ԵԱՀԿ կարճաժամկետ դիտորդական առաքելության հատուկ համակարգող և ղեկավար: Նահիմա Լանջրին ղեկավարում էր ԵԱՀԿ ԽՎ պատվիրակությունը: Ալեքսանդր Պոչեյը ղեկավարում էր ԵԽԽՎ պատվիրակությունը: Հեյդի Հաուտալան ղեկավարում էր ԵԽ պատվիրակությունը: Սույն ԸՄԴԱ-ի կազմում ներգրավված հաստատություններից յուրաքանչյուրը ընդունել է 2005թ.-ի Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագիրը:<sup>2</sup>

Ընտրությունների օրը տեղակայվել են 317 դիտորդներ 39 երկրներից, այդ թվում ԺՀՄԻԳ-ի կողմից գործուղված 244 երկարաժամկետ և կարճաժամկետ դիտորդները, ինչպես նաև ԵԱՀԿ ԽՎ 46 անդամից բաղկացած պատվիրակությունը, ԵԽԽՎ 12 անդամից բաղկացած պատվիրակությունը և Եվրոպական խորհրդարանի 10 անդամից բաղկացած պատվիրակությունը: Քվեարկության մեկնարկը դիտարկվել է երկրի ողջ տարածքում գտնվող 82, իսկ քվեարկության ընթացքը՝ 995 տեղամասային կենտրոններում: Ձայների հաշվարկը դիտարկվել է 103 տեղամասային կենտրոններում, իսկ աղյուսակավորումը՝ բոլոր 38 Տարածքային ընտրական հանձնաժողովներում (ՏՀՀ):

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գնահատել է ընտրական գործընթացի համապատասխանությունը ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին և ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորություններին ու չափանիշերին, ինչպես նաև ներպետական օրենսդրությանը: Վերջնական զեկույցը հաջորդում է «Նախնական արդյունքների և եզրակացությունների վերաբերյալ հայտարարությանը», որը հրապարակվել է Երևանում 2018թ. դեկտեմբերի 10-ին կայացած մամուլի ասուլիսի ժամանակ:<sup>3</sup>

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն շնորհակալություն է հայտնում իշխանություններին ընտրությունների դիտարկման հրավերի համար և Կենտրոնական ընտրական հանձնաժողովին ու Արտաքին գործերի նախարարությանը՝ իրենց աջակցության և համագործակցության համար: Այն նաև իր գնահատանքն է հայտնում այլ հանրապետական և տեղական պետական հաստատություններին, քաղաքական կուսակցություններին, քաղաքացիական հասարակության, ՁԼՄ-ների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին և այլ զրուցակիցներին իրենց տեսակետները կիսելու համար:

<sup>2</sup> Տե՛ս՝ 2005թ.-ի [Ընտրությունների միջազգային դիտարկման սկզբունքների հռչակագիր](#):

<sup>3</sup> Տե՛ս՝ [Հայաստանի վերաբերյալ ԺՀՄԻԳ-ի ընտրություններին առնչվող բոլոր նախկին զեկույցները](#)



### III. ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍ

Վերջին խորհրդարանական ընտրությունները Հայաստանում կայացել են 2017թ.-ի ապրիլի 2-ին: Դրանք առաջին խորհրդարանական ընտրություններն էին, որ հաջորդում էին 2015թ.-ի սահմանադրական բարեփոխումներին, որոնցով նվազեցվել էին նախագահի լիազորությունները հոգուտ վարչապետի և Ազգային ժողովի: Այդ ընտրությունների արդյունքում կոալիցիոն կառավարություն էր կազմվել 58 մանդատ ստացած Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) և 7 մանդատ ստացած Հայ հեղափոխական դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության միջև, մինչ Ծառուկյան դաշինքը (31 մանդատ) և Ելք դաշինքը (9 մանդատ) կազմել էին ընդդիմություն:

2018թ. ապրիլի հակակառավարական ցույցերը, որոնք կազմակերպիչների կողմից անվանվել էին «ոչ բռնի, թավշյա հեղափոխություն», ավարտվեցին վարչապետ Սերժ Սարգսյանի հրաժարականով և իշխանափոխությամբ: Մայիսի 8-ին Ազգային ժողովը երկրորդ քվեարկությամբ ընդդիմության առաջնորդ Նիկոլ Փաշինյանին ընտրեց նոր վարչապետի պաշտոնում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի կազմած կառավարությունը նախաձեռնեց ընտրական բարեփոխումներ, ինչպես նաև նպատակ հռչակեց մեկ տարվա ընթացքում անցկացնել նոր խորհրդարանական ընտրություններ:

Հոկտեմբերի 17-ին կառավարությունը Ազգային ժողով ներկայացրեց ընտրական օրենսգրքի փոփոխությունների նախագիծը, որով փորձ էր արվում նշանակալի փոփոխություններ ներմուծել ընտրական համակարգում և ընտրությունների այլ ասպեկտներում: Դրանք ներառում էին վարկանիշային թեկնածուների բաց ցուցակների վերացում, անցում զուտ համամասնական ընտրակարգի՝ 30 տոկոս գենդերային քվոտայով և խորհրդարան անցնելու ավելի ցածր շեմերով:<sup>4</sup> Առաջարկվող փոփոխությունները արտահերթ ընտրությունների նշանակումից երեք օր առաջ խորհրդարանում կայացած վերջնական քվեարկության ժամանակ չկարողացան ստանալ ձայների պահանջվող երեք հինգերորդը:<sup>5</sup>

Նոյեմբերի 1-ին նախագահը հայտարարեց դեկտեմբերի 9-ին արտահերթ ընտրությունների անցկացման մասին: Այդ ընտրությունները կայանալու էին ի հետևումն վարչապետ Փաշինյանի՝ հոկտեմբերի 16-ին ներկայացրած տակտիկական հրաժարականի, որի նպատակն էր լուծարել Ազգային ժողովը: ԱԺ պատգամավորների մեծամասնությունը նախապես պայմանավորվել էր չընտրել նոր վարչապետ՝ այդպիսով հնարավորություն ստեղծելով արտահերթ ընտրությունների անցկացման համար:<sup>6</sup>

<sup>4</sup> Վենետիկի հանձնաժողովի 2002թ.-ի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» II.2.բ մասում ասվում է, որ «ընտրական օրենսդրության հիմնական բաղադրիչները, մասնավորապես ընտրական համակարգը... չպետք է ենթակա լինեն փոփոխությունների ընտրություններին նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում...»:

<sup>5</sup> Ազգային ժողովը դեմ քվեարկեց փոփոխությունների նախագծին հոկտեմբերի 22-ին (56 կողմ և 3 դեմ ձայնով) և հոկտեմբերի 29-ին (62 կողմ և 2 դեմ ձայնով): Ընտրական օրենսգրքի փոփոխությունների ընդունման համար պահանջվում է առնվազն 63 կողմ ձայն:

<sup>6</sup> Ըստ օրենքի՝ Ազգային ժողովը լուծարվում է վարչապետի ընտրության երկրորդ անհաջող փորձից հետո:

Կանայք թերներկայացված են պետական պաշտոններում: Նրանք զբաղեցնում են լուծարված Ազգային ժողովի պատգամավորների 17 տոկոսը, 21 նախարարի պաշտոնակատարի պաշտոններից 1-ը, 10 մարզպետի պաշտոններից և ոչ մեկը և 49 քաղաքապետի պաշտոններից միայն մեկը:<sup>7</sup>

#### IV. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Խորհրդարանական ընտրությունների իրավական դաշտը համապարփակ է: Ընտրությունները հիմնականում կարգավորվում են 1995թ. սահմանադրությամբ՝ վերջին անգամ փոփոխված 2015թ.-ին, և 2016թ. ընտրական օրենսգրքով՝ վերջին անգամ փոփոխված 2018թ.-ի մայիսին:<sup>8</sup> Ընտրությունների իրավական դաշտը ներառում է նաև մի շարք այլ օրենքներ, այդ թվում՝ ՀՀ օրենքները «Քաղաքական կուսակցությունների» և «Հավաքների ազատության մասին», ՀՀ քրեական և վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքերը, ինչպես նաև ԿՀՀ որոշումները:<sup>9</sup> Հայաստանը նաև կողմ է հանդիսանում ժողովրդավարական ընտրություններին առնչվող միջազգային և տարածաշրջանային իրավական գործիքների:<sup>10</sup>

Ընտրական օրենսգրքի և այլ օրենքների 2018թ.-ի մայիսի փոփոխություններով ընդլայնվել է այն պետական պաշտոնյաների և ծառայողների ցանկը, որոնց արգելվում է քարոզարշավ իրականացնել, և վերացվել են ընտրությունների օրը դիտարկում իրականացնելու համար ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրման սահմանափակումները՝ համաձայն ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականների: Բացի այդ, ընտրական հանցագործությունների համար սահմանվել են ավելի խիստ տույժեր և պատժամիջոցներ, ինչպես նաև քրեական պատասխանատվություն է սահմանվել անձին քաղաքական քարոզչություն իրականացնել հարկադրելու, ձայների առքուվաճառքի դյուրացման և ընտրողների վրա ներգործելու նպատակ հետապնդող բարեգործության դեպքերի համար: Փոփոխություններով նաև ապահովվել է, որ ընտրական հանձնաժողովներից բացի քաղաքական կուսակցությունները, թեկնածուներն ու դիտորդները ևս իրավունք ունենան պահանջել ենթադրյալ վարչական իրավախախտումների դեպքերի հետաքննություն:

<sup>7</sup> Տե՛ս՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կոմիտեի Հայաստանի վերաբերյալ միասնական հինգերորդ և վեցերորդ զեկույցների [Եզրափակիչ դիտարկումները](#), CEDAW/C/ARM/CO/5-6, 2016թ. նոյեմբերի 25:

<sup>8</sup> Ընտրական օրենսգրքի բարեփոխումներ կատարվել են նաև 2018թ. հունիսին, սակայն միայն հանրաքվեների անցկացման մասով:

<sup>9</sup> Այս ընտրությունների ժամանակ ԿՀՀ-ն ընդունել է ընդամենը 85 որոշում: Նախկին ընտրությունների ընթացքում ընդունված որոշ ԿՀՀ որոշումներ նույնպես կիրառվել են ԿՀՀ-ի կողմից:

<sup>10</sup> Դրանք ներառում են 1966թ.-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), 1965թ.-ի Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան, 1979թ.-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), 2003թ.-ի Կոռուպցիայի դեմ կոնվենցիան, 2006թ.-ի ՄԱԿ-ի Կոնվենցիան հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին (CRPD) և 1950թ.-ի Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան: Հայաստանը նաև անդամակցում է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովին և Կոռուպցիայի դեմ պայքարի պետությունների խմբին (ԳՐԵԿՈ):

ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի որոշ նախկին հանձնարարականներ դեռ մնում են չկատարված, այդ թվում՝ այնպիսիք, որոնք վերաբերում են քարոզարշավի ֆինանսավորման հաշվետվություններից կազմակերպչական ծախսերի բացառմանը, ընտրական բողոքներ բերելու իրավունքի սահմանափակմանը, թեկնածուների քաղաքացիության հետ կապված պահանջներին, ինչպիսիք առկա են սահմանադրությունում, ինչպես նաև դաշինքների՝ խորհրդարան անցնելու համար սահմանված շեմերին:

*ԺՀՄԻԳ-ի սույն և նախկին զեկույցներում մատնանշված բացերի ու երկիմաստությունների վերացման համար իրավական դաշտը պետք է վերանայվի հաջորդ ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ՝ ներառական օրենսդրական գործընթացի միջոցով:*

## V. ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ խորհրդարան անցնում են առնվազն 101 պատգամավորներ երկաստիճան համամասնական կարգով, ըստ որի թեկնածուներն ընտրվում են մեկ փակ համապետական ցուցակով և 13 բաց տարածքային ցուցակներով:<sup>11</sup> Քվեաթերթիկը ներառում է համապետական ցուցակը և համապատասխան տարածքային ցուցակը՝ թեկնածուների նշման այբբենական կարգով:

Խորհրդարան անցնելու համար քաղաքական կուսակցությունները պետք է հաղթահարեն 5 տոկոսի, իսկ դաշինքները՝ 7 տոկոսի արգելապատնեշը: Մանդատները նախ բաշխվում են կուսակցությունների և դաշինքների միջև՝ ըստ համապետական ցուցակների ստացած քվեների թվի: Այնուհետև, եթե բաշխված մանդատների թիվը հավասար է, մանդատների կեսը տրվում է համապետական ցուցակին ըստ թեկնածուների հերթականության, իսկ մյուս կեսը տրվում է տարածքային ցուցակին՝ ըստ վարկանիշային թեկնածուների ստացած ձայների թվի<sup>12</sup>: Եթե կուսակցության կամ դաշինքի ստացած մանդատների թիվը կենտ է, ապա տրվում է ևս մեկ մանդատ վերջինիս համապետական ցուցակին:

Համակարգը նախատեսում է ընդհանուր թվով մինչև չորս մանդատ վերջին մարդահամարի տվյալներով ամենամեծ մշտական բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ (2011թ. եզրիններ, ռուսներ, ասորիներ և քրդեր): Յուրաքանչյուր կուսակցություն կամ դաշինք կարող է իր համապետական ցուցակին ավելացնել երկրորդ մաս՝ նշելով ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի թեկնածուները: Այս ընտրություններին միայն «Լուսավոր Հայաստան»

<sup>11</sup> Տարածքային ցուցակներում կարող է ընդգրկվել առավելագույնը մեկ թեկնածու յուրաքանչյուր 15.000 ընտրողի հաշվով: Վարկանիշային թեկնածուները պետք է նաև ընդգրկված լինեն համապետական ցուցակում:

<sup>12</sup> Յուրաքանչյուր տարածքային ցուցակին տրվող մանդատների թիվը որոշվում է բոլոր տարածքներում վարկանիշային թեկնածուների ստացած ձայների հիման վրա՝ կիրառելով Դ՛Նոնթի բանաձևը: Տարածքային ցուցակներին մանդատներ տրվում են ըստ թեկնածուների ստացած ձայների թվի մեծության:

կուսակցությունը, «Իմ քայլը» դաշինքը, «Բարգավաճ Հայաստան» և «Օրինաց երկիր» կուսակցություններն են գրանցել ազգային փոքրամասնությունների ցուցակներ:<sup>13</sup>

Ըստ սահմանադրության՝ կառավարություն ձևավորելու համար անհրաժեշտ է խորհրդարանական կայուն մեծամասնություն (մանդատների 54 տոկոսը): Եթե հաղթող կուսակցությունը ստանում է բաշխված մանդատների ընդհանուր թվի մեծամասնությունը, սակայն 54 տոկոսից պակաս, վերջինիս տրվում են լրացուցիչ մանդատներ պահանջվող կայուն մեծամասնությունը ձևավորելու համար: Եթե հաղթող կուսակցությունը կամ դաշինքը ստանում է սկզբնական 105 մանդատների երկու երրորդից ավելին, խորհրդարան անցած առավել փոքր կուսակցություններին ու դաշինքներին տրվում են լրացուցիչ մանդատներ՝ միասնաբար մեկ երրորդի չափով փոքրամասնություն կազմելու համար:<sup>14</sup> Եթե ընտրությունների արդյունքում կամ արդյունքների ամփոփումից հետո վեց օրվա ընթացքում քաղաքական կուսակցիա կազմելու եղանակով կայուն մեծամասնություն չի ձևավորվում, անցկացվում է ընտրությունների երկրորդ փուլ առավելագույն ձայներ ստացած երկու ցուցակների միջև ընտրությունների օրվանից հետո 28-րդ օրը:<sup>15</sup>

## VI. ԸՆՏՐԱԿԱՆ ՎԱՐՉԱԲԱՐՈՒԹՅՈՒՆ

### A. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ընտրությունների վարչարարությունն իրականացվում է եռաստիճան համակարգով՝ բաղկացած ԿԸՀ-ից, 38 Տարածքային ընտրական հանձնաժողովներից (ՏԸՀ) և 2.010 Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովներից (ԸԸՀ): ԿԸՀ-ն մշտական գործող և մասնագիտացված մարմին է՝ բաղկացած յոթ անդամից, որոնք ընտրվում են վեց տարի ժամկետով ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք-հինգերորդի կողմից: ԿԸՀ բոլոր անդամները վերանշանակվել են 2016թ. հոկտեմբերին:

ԿԸՀ-ն պատասխանատու է ընտրությունների կազմակերպման ու անցկացման համար և ունի լիազորությունների ու պատասխանատվությունների լայն շրջանակ՝ ներառյալ իրավաբանորեն պարտավորեցնող որոշումների ընդունումը, թեկնածուների ցուցակների գրանցումը, ստորին օղակների հանձնաժողովների վերապատրաստումները, քարոզարշավի ֆինանսավորման մշտադիտարկումը և միջազգային ու ՔՀԿ դիտորդների, ինչպես նաև ՋԼՄ ներկայացուցիչների հավատարմագրումը:

ԿԸՀ-ն գումարել է պարբերական բաց նիստեր, որոնք հեռարձակվել են առցանց և որոնց մասնակցել են դիտորդներ, ՋԼՄ ներկայացուցիչներ և ընտրապայքարի մասնակիցների

<sup>13</sup> Այս ընտրությունների համար բոլոր չորս ազգային փոքրամասնության ներկայացուցիչ պատգամավորներն ընտրվել են «Իմ քայլը» դաշինքի ընտրացուցակից:

<sup>14</sup> Լրացուցիչ մանդատների տրամադրումը կատարվում է նույն եղանակով, ինչ հիմնական մանդատներինը:

<sup>15</sup> Ընտրապայքարի առաջին երկու մասնակիցները կարող են կազմել նոր դաշինքներ, որոնք կարող են ներառել առաջին փուլին մասնակցած այլ կուսակցություններ:

լիազոր ներկայացուցիչներ: ԿԸՀ-ն վայելում է ընտրական գործընթացի այն բոլոր շահառուների վստահությունը, որոնց հետ հանդիպել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն:

ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված բոլոր ԿԸՀ նիստերի ընթացքում որոշումներն ընդունվել են միաձայն, թեև որոշ ԿԸՀ անդամներ քննարկումներին ակտիվ մասնակցություն չեն ցուցաբերել: Նիստերի օրակարգերը կազմվում և առցանց հրապարակվում էին նախօրոք: ԿԸՀ որոշումները հիմնականում հրապարակվել են սահմանված ժամկետներում:<sup>16</sup> Թեև ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է որոշ ՏԸՀ որոշումներ, որոնք փակցվել էին ցուցատախտակների վրա հանրության կողմից ծանոթացման համար, ՏԸՀ որոշումները ընտրությունների ընթացքում առցանց չեն հրապարակվել:<sup>17</sup>

*Ընտրական վարչարարության աշխատանքի թափանցիկության բարձրացման համար ԿԸՀ-ն պետք է իր կայքէջում պարբերաբար և ժամանակին հրապարակի ԿԸՀ-ի և ՏԸՀ-ների բոլոր որոշումները:*

Նոյեմբերի 19-ի ԿԸՀ-ն համապարփակ արշավ սկսեց իրականացնել քաջալերելու քվեարկությանը մասնակցությունը, ընտրողներին ընտրությունների օրվա ընթացակարգերի վերաբերյալ իրազեկելու և ձայների առքուվաճառքի արգելքի մասին նախազգուշացնելու համար, այդ թվում՝ լրատվամիջոցներով և սոցիալական ցանցերով (նաև մատնախոսության լեզվով): Այնուհանդերձ, ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատեց, որ տպագիր նյութերը բավականաչափ լայնորեն չեն տարածվել հեռավոր գյուղական վայրերի ընտրողներին հասանելի լինելու համար: ԿԸՀ-ն նաև տպագիր նյութեր է պատրաստել զինծառայողների համար, որոնց մեջ կային մեծ թվով առաջին անգամ քվեարկողներ: Ըստ ԿԸՀ-ի՝ ժամանակի սղության պատճառով հնարավոր չի եղել տեսողական խնդիրներ ունեցող ընտրողների համար մատչելի ձևաչափով տպագիր նյութեր պատրաստել:

Ընտրական օրենսգիրքը թափանցիկության բարձրացման նպատակով նախատեսում է բոլոր տեղամասային կենտրոններում տեսախցիկների կիրառում: Այս ընտրությունների համար ԿԸՀ-ն կիրառել էր իր 2016թ. որոշումը, ըստ որի տեսախցիկներ տեղադրվում են միայն 1.500 ամենամեծ տեղամասային կենտրոններում այնպես, որ բոլորի համար հնարավոր լինի առցանց հետևել և տեսագրել քվեարկության ու ձայների հաշվարկի ընթացքը:<sup>18</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված շատ տեղամասային կենտրոններում քվեարկության սենյակների ներքին դասավորությունն ու տեսախցիկների անհարմար դիրքում տեղադրված լինելը խոչընդոտել են առցանց ձայների հաշվարկին պատշաճ կերպով հետևելուն:<sup>19</sup> Ընտրություններից և ընտրական վեճերի լուծման համար օրենքով սահմանված համապատասխան ժամկետների ավարտից հետո ընտրական հանձնաժողովները, ընտրապայքարի մասնակիցներն ու հավատարմագրված

<sup>16</sup> Ըստ օրենքի՝ որոշումները պետք է հրապարակվեն մինչև ընդունման օրվա ավարտը:

<sup>17</sup> [ԿԸՀ կայքէջ](#) ՏԸՀ որոշումներին նվիրված հատվածը չի թարմացվել 2018թ.-ի հոկտեմբերից:

<sup>18</sup> Ընտրական օրենսգիրքը սահմանում է, որ տեսախցիկներ պետք է տեղադրվեն բոլոր տեղամասային կենտրոններում: Ըստ ԿԸՀ-ի՝ ծածկույթը մնում է սահմանափակ տեխնիկական պատճառներով, ինչպես օրինակ ՏՏ ենթակառուցվածքների բացակայությունը որոշ տեղամասերում:

<sup>19</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված 1.157 տեսախցիկներից մոտ 38-ի աշխատանքը խափանվել է ընտրությունների օրվա ընթացքում որոշ պահերի: Ըստ ԿԸՀ-ի՝ դրա պատճառը եղել է կապի հետ ժամանակավոր խնդիրը:

դիտորդները հնարավորություն են ունեցել ձեռք բերել տեսախցիկներով արված տեսագրությունները ծառայություններ մատուցող առևտրային ընկերությունից:<sup>20</sup>

## **B. ՍՏՈՐԻՆ ՕՂԱԿԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ**

ՏՀՀ-ները մշտական գործող մասնագիտացված մարմիններ են՝ բաղկացած յոթ անդամից, որոնց նշանակում է ԿՀՀ-ն վեց տարի ժամկետով՝ բաց մրցույթի հիման վրա<sup>21</sup>: ՏՀՀ-ները վերահսկում են ԸՀՀ-ների գործողությունները, քննում վերջիններիս գործողությունների կամ անգործության վերաբերյալ բողոքները, կազմակերպում վերահաշվարկներ և աղյուսակավորում ու ԿՀՀ-ին են փոխանցում ընտրությունների արդյունքները: Բոլոր ՏՀՀ-ները, որոնց հետ հանդիպել է ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն, փորձառու էին և վայելում էին ընտրապայքարի մասնակիցների վստահությունը: ՏՀՀ անդամների մեծ մասն ուներ ընտրական փորձ, և ՏՀՀ-ներն ընդհանուր առմամբ իրենց աշխատանքն իրականացրել են արդյունավետ կերպով ու սահմանված ժամկետների պահպանմամբ: Այնուհանդերձ ՏՀՀ-ների աշխատանքային ժամերի մասին հանրային տեղեկատվության պակասը կարող է սահմանափակել նրանց աշխատանքի թափանցիկությունը:<sup>22</sup>

Բոլոր չորս խորհրդարանական խմբակցությունները ԿՀՀ են ներկայացրել ԸՀՀ անդամների թեկնածուներ մինչև նոյեմբերի 21-ի սահմանված վերջնաժամկետը: ԸՀՀ նախագահների և քարտուղարների պաշտոնները բաշխվել են ներկայացնող կուսակցությունների խորհրդարանական ներկայացվածությանը համամասնորեն: Այս պաշտոնների բաշխումը կոնկրետ տեղամասային կենտրոններում կատարվել է վիճակահանությամբ՝ սահմանված վերջնաժամկետից չորս օր շուտ՝ նպատակ ունենալով ավելի շատ ժամանակ տրամադրել կուսակցություններին հարմար թեկնածուներ գտնելու համար:<sup>23</sup> Միջազգային հանրության աջակցությամբ ԿՀՀ-ի կողմից իրականացված 16.000 ԸՀՀ անդամների վերապատրաստումն ընդհանուր առմամբ դրական է գնահատվել ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից: Այնուհանդերձ, աղյուսակավորման ընթացքում ԸՀՀ-ների արդյունքների ամփոփման արձանագրություններում հայտնաբերված վրիպակների քանակը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել արձանագրությունների լրացման կարգին հետագա վերապատրաստումների ընթացքում և ավելի շատ ժամանակ տրամադրել գործնական վարժություններն (Տե՛ս՝ *Ընտրությունների օր*):

<sup>20</sup> Ըստ ԿՀՀ-ի՝ Քննչական կոմիտեն, Ոստիկանությունը և մեկ ԸՀՀ-ի նախագահ դիմել են համապատասխանաբար 9, 7 և 1 տեսագրության պատճեն ստանալու համար: Պահանջվող տեսագրություններից երեքը հնարավոր չի եղել տրամադրել համապատասխան տեղամասային կենտրոններում տեսախցիկների բացակայության պատճառով:

<sup>21</sup> ՏՀՀ-ները կազմավորվել են 2016թ.-ին: Յուրաքանչյուր ՏՀՀ-ի առնվազն երկու անդամ պետք է լինի թերներկայացված սեռից:

<sup>22</sup> Մի քանի դեպքերում ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի այցելած ՏՀՀ-ները փակ են եղել սովորական աշխատանքային ժամերի:

<sup>23</sup> Օրենսդրությամբ սահմանված համամասնությունների համապատասխան՝ ՀՀԿ-ն նախագահի և քարտուղարի պաշտոններ է ունեցել է 2.010 ԸՀՀ-ներից 1.110-ում, Ծառուկյան դաշինքն ունեցել է ղեկավար պաշտոններից մեկական 594 ԸՀՀ-ներում, Իսկ ԵԼՔ դաշինքը և ՀՅԴ-ն ունեցել են համապատասխանաբար 172 և 134 ղեկավար պաշտոններ:

Ընտրական վարչարարության մարմիններում կանայք լավ են ներկայացված: ԿԸՀ յոթ անդամներից երեքը կանայք են՝ ներառյալ նախագահի տեղակալը: Կանայք կազմում են բոլոր ՏԸՀ անդամների 35 տոկոսը, սակայն հազվադեպ են զբաղեցնում ղեկավար պաշտոններ:<sup>24</sup> Ընտրությունների օրը ԸՄԴԱ կողմից դիտարկված տեղամասային կենտրոններում ԸԸՀ-ների անդամների 61 տոկոսը կանայք էին, իսկ այցելած տեղամասերում ԸԸՀ-ների անդամների 49 տոկոսը նախագահում էին կանայք:<sup>25</sup>

## VII. ԸՆՏՐՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Ընտրությունների օրվա դրությամբ 18 տարին լրացած բոլոր քաղաքացիներն ունեն ընտրելու իրավունք, բացի ծանր հանցագործությունների համար ազատազրկվածներից և դատարանի վճռով անգործունակ ճանաչվածներից:<sup>26</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիան սահմանում է, որ հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակում չպետք է լինի անկախ հաշմանդամության տեսակից:<sup>27</sup> Չնայած այդ դրույթներին և ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկին՝ սահմանադրության մեջ և ընտրական օրենսգրքում մնում են առկա մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումներ:

*Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:*

Ընտրողների գրանցումը պասիվ է և կատարվում է Բնակչության պետական ռեգիստրի հիման վրա, որը վարում է ՀՀ Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունը (ԱՎՎ): Ընտրողների ռեգիստրը ներառում է Հայաստանում մշտապես բնակվող ընտրական իրավունք ունեցող բոլոր քաղաքացիներին, այդ թվում զգալի թվով *փաստացիորեն* արտերկրում բնակվող ընտրողների:<sup>28</sup> Մինչև նոյեմբերի 19-ի սահմանված վերջնաժամկետը ԱՎՎ-ն կազմել և տպագրել է նախնական ընտրողների ցուցակները,

<sup>24</sup> 38 ՏԸՀ-ներից միայն մեկը ուներ կին նախագահ և 11-ը՝ կին քարտուղարներ:

<sup>25</sup> ԿԸՀ-ն ԸԸՀ-ների անդամների կազմի մասին գենդերային վիճակագրություն չի վարում:

<sup>26</sup> Համաձայն իշխանությունների՝ դատարանի վճռով անգործունակ ճանաչված անձանց ընտրացուցակներից հանելու ֆորմալ մեխանիզմ առկա չէ:

<sup>27</sup> Տե՛ս՝ 2006թ. Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի 12-րդ և 29-րդ հոդվածները: Տե՛ս նաև՝ 2013թ.-ի Կոնվենցիայի Կոմիտեի թիվ. 4/2011 Հաղորդագրի 9.4 պարբերությունը (*Zsolt Bujdosó and five others v. Hungary* Չոլտ Բույդոսոն և հինգ այլ ընդդեմ Հունգարիայի), որտեղ նշվում է, որ «29-րդ հոդվածը հաշմանդամություն ունեցող անձանց որևէ խմբի համար որևէ ողջամիտ սահմանափակում չի նախատեսում, ոչ էլ թույլատրում է որևէ բացառություն: Ուստի ենթադրյալ կամ իրական ֆիզիկական կամ մտավոր որևէ հաշմանդամության հիմքով ընտրական իրավունքից զրկելը, ներառյալ որևէ անհատական գնահատականի հիման վրա սահմանափակելը հանդիսանում է խտրականություն հաշմանդամության հիմքով»: 1991թ. ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթի 41.1 պարբերությունն անդամ երկրներին պարտավորեցնում է «երաշխավորել հաշմանդամություն ունեցող անձանց մարդու իրավունքների պաշտպանությունը»:

<sup>28</sup> Չնայած բազմաթիվ դիմումներին՝ իշխանությունները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին չտրամադրեցին պաշտոնական տվյալներ կամ գնահատականներ արտերկրում ժամանակավոր կամ մշտապես բնակվող քաղաքացիների թվի վերաբերյալ:

որոնք փակցվել են տեղամասային կենտրոններում հանրության կողմից ծանոթացման համար: Նույն օրը ԱՎՎ-ն ընտրողների ամբողջական ռեգիստրը հրապարակել է իր կայքէջում, ինչը օրենքի պահանջն է:<sup>29</sup> Ընտրողների վերջնական ցուցակները ԱՎՎ-ի կողմից հրապարակվել են դեկտեմբերի 6-ին:<sup>30</sup> Ըստ ԿԸՀ-ի հրապարակած ընտրությունների արդյունքների ամփոփման վերջնական արձանագրության՝ գրանցված ընտրողների ընդհանուր թիվը կազմում էր 2.591.276: ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցների մեծ մասն ընդհանուր առմամբ վստահություն են հայտնել ընտրողների ցուցակների ճշգրտության նկատմամբ:

Ընտրական օրենսգիրքը բավականաչափ մեխանիզմներ է սահմանել ընտրողների համար ընտրացուցակներում ուղղումներ կատարելու, ներառվելու կամ ցուցակից հանվելու, ինչպես նաև քվեարկելու նպատակով ըստ ժամանակավոր բնակության վայրի գրանցվելու դիմումներ ներկայացնելու համար, մինչև ընտրություններից տաս օր առաջ:<sup>31</sup> Հատուկ ցուցակներ են կազմվում քրեակատարողական հիմնարկների և ձերբակալված անձանց պահելու վայրերի, ոստիկանության և զորամասերի, ինչպես նաև ստացիոնար բժշկական հաստատությունների համար: Արտերկրում տեղակայված դիվանագիտական և ռազմական ծառայություն անցնող ընտրողները, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները կարող են գրանցվել համացանցով քվեարկելու համար:<sup>32</sup> ԱՎՎ-ն ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ներկայացրեց ընտրողների ցուցակների ճշգրտությունը բարելավելուն ուղղված իր կողմից ձեռնարկվող շարունակական ջանքերը՝ ՔԿԱԳ գործակալության բաժինների հետ տվյալների խաչաձև ստուգումների միջոցով: Չնայած այդ ջանքերին և նախկին ԺՀՄԻԳ հանձնարարականներին՝ ընտրողների ռեգիստրը դեռևս ներառում է հասցեներ, որտեղ գրանցված են մեծ թվով ընտրողներ, ինչը մնում է մտահոգության առարկա:<sup>33</sup>

Ինչպես պահանջվում է ընտրական օրենսգրքով, դեկտեմբերի 10-ին ԿԸՀ-ն հրապարակեց բոլոր տեղամասային կենտրոնների սքանավորված ստորագրված ընտրացուցակները՝ քվեարկությանը մասնակցած անձանց անձնական տվյալներով և ստորագրություններով: ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին քաղաքացիների անձնական տվյալների գաղտնիության վերաբերյալ: Մինչ ընտրական գործընթացի շահառուների համար քվեարկությանը մասնակցած անձանց մասին տեղեկատվության հասանելիությունը կարևոր է որպես երաշխիք այլ անձի փոխարեն քվեարկության պրակտիկայի դեմ, և կարող է լինել ընտրացուցակներում մուտքագրումների չարաշահումները կանխարգելող գործոն, ընտրողների անձնական

<sup>29</sup> Հրապարակված տեղեկատվությունը ներառում էր ընտրողների անունները, ծննդյան թվերը և բնակության վայրի հասցեները՝ ըստ տեղամասային կենտրոնների:

<sup>30</sup> ԸԸՀ-ները կարող են ընտրողներին գրանցել լրացուցիչ ցուցակներում ընտրությունների օրվանից առաջ կամ ընտրությունների օրը, եթե ընտրողը ներկայացնում է ԱՎՎ կամ դատարանի որոշում:

<sup>31</sup> Համաձայն ԱՎՎ-ի՝ մինչև օրենքով սահմանված՝ նոյեմբերի 29-ի վերջնաժամկետը 12.549 ընտրողներ էին գրանցվել ըստ ժամանակավոր բնակության վայրի քվեարկելու համար:

<sup>32</sup> Ընդհանուր թվով 729 այդպիսի ընտրողներ են դիմել ԿԸՀ մինչև նոյեմբերի 17-ի վերջնաժամկետը, իսկ 504-ը մասնակցել են էլեկտրոնային քվեարկությանը:

<sup>33</sup> Թրանսպարենսի ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի [հայտարարության](#) համաձայն, կան 855 և 13 հասցեներ, որտեղ գրանցված են համապատասխանաբար 20 և 100 ընտրողներ:



տվյալների պարբերական հրապարակումը հակասում է միջազգային լավ գործելակերպին:<sup>34</sup>

*Բշխանությունները պետք է նախաձեռնեն միջոցների իրավական վերանայում՝ երաշխավորելու ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունը՝ մինևույն ժամանակ ընտրական շահառուների համար պահպանելով պատշաճ հասանելիություն ընտրացուցակներին:*

## VIII. ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Թեկնածուները պետք է լինեն ընտրական իրավունք ունեցող, 25 տարին լրացած անձինք, նախորդ չորս տարիների ընթացքում բնակված լինեն Հայաստանում և հանդիսանան բացառապես Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ, ինչպես նաև տիրապետեն հայերեն լեզվին: Դատավորները, դատախազները, զինծառայողները, ոստիկանական ծառայողներն ու մի շարք այլ պետական ծառայողներ, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների անդամները չեն կարող առաջադրվել: Թեկնածուների ցուցակները կարող են ընդգրկել անկուսակցական անձանց:<sup>35</sup> Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման իրավունքի սահմանափակումը հակասում է ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպային իրավունքին:<sup>36</sup>

*Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:*

Ներառական և թափանցիկ գործընթացում ԿԸՀ-ն նոյեմբերի 19-ին գրանցեց մասնակցության հայտ ներկայացրած բոլոր 9 քաղաքական կուսակցությունների և 2 կուսակցությունների դաշինքների ընտրացուցակները՝ ընդհանուր թվով 1.444

<sup>34</sup> Վենետիկի հանձնաժողովի 2016թ. [Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրի՝ ընտրություններին մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման մասին մեկնաբանական հայտարարության](#) 3-րդ պարբերությունն ընդգծում է, որ «պետք է ճիշտ հավասարակշռություն գտնել տվյալների պաշտպանության և քվեարկության գաղտնիության միջև մի կողմից, և ստորագրված (կամ կնքված) ընտրացուցակները դիտելու՝ շահագրգիռ անձանց հետաքրքրության միջև՝ մյուս կողմից» ԲԲԻԿ-ի՝ ԲԲԻՄԴ-ի 1988թ. թիվ 16 Ընդհանուր մեկնաբանության 10-րդ պարբերությունը նշում է, որ «պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ միջոցներ ապահովելու, որ մարդու անձնական կյանքին վերաբերող տվյալները չհայտնվեն այնպիսի անձանց ձեռքերում, որոնց օրենքով թույլատրված չէ ստանալ, մշակել և օգտագործել դրանք, և որ դրանք երբևիցե չօգտագործվեն սույն Դաշնագրի նպատակներին անհարիր ձևով»: Տես նաև [Անձնական տվյալների ավտոմատացված մշակման դեպքում անհատների պաշտպանության մասին ԵՄ Կոնվենցիայի](#) 7-րդ հոդվածը:

<sup>35</sup> Համաձայն ԿԸՀ-ի՝ թեկնածուների 26 տոկոսը առաջադրող կուսակցության անդամներ չէին:

<sup>36</sup> 1990թ. ԵԱՀԿ Կոնվենսիայի փաստաթղթի 7.3 պարբերությունը նշում է, որ անդամ երկրները «պարտավորվում են երաշխավորել չափահաս քաղաքացիների համընդհանուր և հավասար ընտրական իրավունքը»: *Sabinasեն ընդդեմ Մոլդովայի* ([Tanase v. Moldova, 27 ապրիլի, դիմում թիվ՝ 7/08](#)) գործով վճռում ՄԻԵԴ-ը գտել էր, որ «որտեղ բազմակի քաղաքացիությունը թույլատրված է, մեկից ավելի քաղաքացիություն ունենալը չպետք է ԱԺ պատգամավոր դառնալու արգելքի հիմք հանդիսանա»:

թեկնածուներով:<sup>37</sup> Ընտրապայքարի մասնակիցներից յուրաքանչյուրը ներկայացրել էր մեկ ընդհանուր համապետական ցուցակ՝ առնվազն 80 թեկնածուներով, և 13 ընտրատարածքներին համապատասխանող տարածքային ցուցակներ:<sup>38</sup> Կուսակցություններն ու դաշինքները մուծում են ընտրական գրավ, որը վերադարձվում է, եթե ցուցակը ստանում է վավեր քվեների 4 տոկոսից ավելին:<sup>39</sup> ԿԸՀ-ն ընտրացուցակները հրապարակել է սահմանված ժամկետներում՝ այդպիսով նպաստելով ընտրապայքարի մասնակիցների մասին հանրային իրազեկմանը:

Մինչ թեկնածուների ընդհանուր թվի 32 տոկոսը կանայք էին, նորընտիր խորհրդարանում կանանց ներկայացվածությունը մնում է ցածր՝ կազմելով պատգամավորների ընդհանուր թվի 24 տոկոսը:<sup>40</sup> Բոլոր ընտրացուցակները բավարարել էին օրենքով սահմանված գենդերային ներկայացվածության 25 տոկոս շեմի պահանջը, ըստ որի յուրաքանչյուր չորս թեկնածուներից մեկը պետք է լինի թերներկայացված սեռից: Այդ քվոտան, այնուհանդերձ, չի ապահովում խորհրդարանում կանանց ներկայացվածության համարժեք համամասնություն, քանի որ մանդատների կեսը բաշխվում է վարկանիշային թեկնածուներին (բաց ցուցակներ):<sup>41</sup> Մինչ գենդերային քվոտան ենթադրում է, որ քաղաքական կուսակցությունների կողմից առավել մեծ ջանքեր պետք է գործադրվեն կանանց քաղաքական մասնակցությունը քաջալերելու և դյուրացնելու հարցում, ցավոք ընտրապայքարի մասնակիցներից շատերը կանանց ընտրացուցակներում ներգրավում էին միայն ձևականորեն:<sup>42</sup>

## IX. ՔԱՐՈՋԱՐՇԱՎ

Արտահայտման, միավորումներ կազմելու, խաղաղ հավաքների ու ազատ տեղաշարժի հիմնարար ազատությունները լիարժեք պահպանված են եղել քարոզարշավի ընթացքում: Քարոզարշավը պաշտոնապես մեկնարկել է նոյեմբերի 26-ին և ավարտվել դեկտեմբերի 7-

<sup>37</sup> Գրանցված քաղաքական կուսակցություններն էին՝ «Հայ հեղափոխական դաշնակցություն» (ՀՅԴ), «Լուսավոր Հայաստան» (ԼՀԿ), «Քրիստոնյա-ժողովրդական վերածնունդ» (ՔԺՎԿ), «Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական (ՔՈ), «Ազգային առաջընթաց» (ԱԱԿ), «Բարգավաճ Հայաստան» (ԲՀԿ), «Օրինաց երկիր» (ՕԵԿ), «Հայաստանի հանրապետական» (ՀՀԿ) և «Մասնա Ծոեր» համահայկական (ՄԾՀԿ) կուսակցությունները: Գրանցված դաշինքներն էին «Մենք» և «Իմ քայլը» դաշինքները:

<sup>38</sup> Մինչև նոյեմբերի 29-ին սահմանված վերջնաժամկետը ԿԸՀ-ն հաստատեց ինքնաբացարկի 39 անհատական դիմումներ:

<sup>39</sup> Ընտրական գրավը կազմում է 10 մլն. ՀՀԴ (մոտ 18.180 եվրո. 1 եվրոն արժե մոտ 550 ՀՀԴ):

<sup>40</sup> 1991թ. ԵԱՀԿ Մոսկվայի փաստաթղթի 40.4 պարբերությունում մասնակից երկրները հաստատել են, որ «իրենց նպատակն է հասնել կանանց և տղամարդկանց միջև ոչ միայն de jure, այլ նաև de facto հնարավորությունների հավասարության և արդյունավետ միջոցներ կիրառել այդ ուղղությամբ»: Տես նաև Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի (CEDAW) 7(բ) հոդվածը և նույն կոնվենցիայի 1997թ. Կոմիտեի թիվ 23 Ընդհանուր հանձնարարականի 26-րդ պարբերությունը:

<sup>41</sup> Ըստ ընտրությունների վերջնական արդյունքների՝ «Իմ քայլը» դաշինքից ընտրվել է 23 կին (որոնցից միայն 9-ը՝ մարզային ցուցակներից), 5 կին ԲՀԿ-ից (2-ը՝ մարզային ցուցակներից) և 4-ը՝ ԼՀԿ-ից (1-ը՝ մարզային ցուցակից):

<sup>42</sup> Ազգային առաջընթաց կուսակցությունից բացի ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կուսակցությունների ներկայացուցիչ զրուցակիցները նշեցին, որ դժվարություններ են ունեցել փորձառու կին թեկնածուներ հավաքագրելու հարցում 25 տոկոսի քվոտան լրացնելու համար:

ի կեսգիշերին: Նախքան պաշտոնական մեկնարկը քարոզարշավ իրականացնելն օրենքով ո՛չ կարգավորված է, ո՛չ էլ արգելված:<sup>43</sup> Ընտրությունների նշանակումից կարճ ժամանակ անց կուսակցություններն ու հնարավոր թեկնածուներն սկսեցին դիմել ընտրողներին, հիմնականում Ֆեյսբուքի միջոցով, իսկ ավելի ուշ՝ նաև հանրահավաքների, դոնեդուռ քարոզչության, պաստառների ու լրատվամիջոցների միջոցով:<sup>44</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցներ նշեցին, որ քարոզարշավի սեղմ ժամկետների պատճառով առավել նպաստավոր դիրքում էին հայտնվել կայացած կուսակցությունները, որոնք ավելի մեծ ռեսուրսների էին տիրապետում, ինչպես օրինակ՝ գրասենյակներ մարզերում, գույք, հայտնի անուն և աջակիցների միջոցով ֆոնդերի հայթայթման նախապատմություն:<sup>45</sup>

Քարոզարշավը լայնորեն կենտրոնացված էր կուսակցությունների ծրագրերի դրական ներկայացման, Հայաստանի ապագայի տեսլականի, իսկ մարզերում՝ տեղական համայնքներին առնչվող խնդիրների վրա, թեև մասնակիցների մեծ մասը իրականացնում էր նաև որոշակի բացասական քարոզչություն:<sup>46</sup>

Թեև քարոզչությունը որոշ չափով հատկանշվել է մամուլում ընտրապայքարի որոշ մասնակիցների միջև սադրիչ փոխանակումներով՝ կուսակցությունների և դաշինքների՝ միմյանց և ընտրողներին դիմելու տոնայնությունը ընդհանուր առմամբ դրական շարժ է ապրել քարոզարշավի վերջին փուլերում:<sup>47</sup> Քարոզարշավի ընթացքում ագրեսիվ հռետորաբանություն նկատվել է նաև սոցիալական ցանցերի քոմենթների

<sup>43</sup> Նոյեմբերի 23-ին ԿԸՀ-ն [պարզաբանում](#) հրապարակեց՝ բացատրելով, որ քարոզարշավի պաշտոնական մեկնարկից առաջ քարոզչություն իրականացնելը ընտրական օրենսդրության խախտում չէ:

<sup>44</sup> Նոյեմբերի սկզբին կուսակցություններն ու դաշինքները սկսեցին լրատվամիջոցներով հայտարարարել իրենց համապետական ցուցակների առաջին համարների անունները և ներկայացնել իրենց ծրագրերի առաջնահերթությունները: Նոյեմբերի 24-25-ին որոշ կուսակցություններ քայլերթեր կազմակերպեցին մարզային քաղաքներում և Երևանում, իսկ մայրաքաղաքում ԼՀԿ-ի, «Իմ քայլը» դաշինքի և ԲՀԿ-ի քարոզչական վահանակներ սկսեցին ի հայտ գալ: Քարոզարշավի սեղմ ժամկետներով պայմանավորված ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցներ նշեցին, որ դժվարություններ են եղել ծառայություն մատուցող ընկերությունների հետ պայմանագրեր կնքելու հարցում, որոնք երեքից հինգ օր էին պահանջում գովազդային վահանակների տեղադրման համար:

<sup>45</sup> ՔՈ-ն, ԱՍԿ-ն և ՄՕՀԿ-ն հիմնադրվել էին 2018թ.-ին, ՔԺԿԿ-ն հիմնադրվել էր 2005թ.-ին, սակայն առաջին անգամ էր մասնակցում ԱԺ ընտրությունների:

<sup>46</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն դիտարկել է ընդհանուր թվով 63 հանրահավաքներ, որոնք ընթացել են թեկնածուների և ընտրողների միջև դրական շփումների մթնոլորտում: Որևէ լուրջ միջադեպի մասին հաղորդում չի եղել:

<sup>47</sup> «Իմ քայլը» դաշինքի և ՀՀԿ-ի միջև շփումները հակասական էին, հատկապես կապված անվտանգության քաղաքականության հետ: «Իմ քայլը» դաշինքի մի շարք բարձրաստիճան թեկնածուներ, այդ թվում՝ վարչապետը, նախորդ ՀՀԿ-ական կառավարությանը և իր ներկա թեկնածուներին մեղադրեցին կաշառակերության, բանակը թալանելու և իշխանությունը չարաշահելու մեջ: ՀՀԿ մի շարք կարկառուն թեկնածուներ ներկա կառավարությանը մեղադրեցին դավաճանության, իշխանության չարաշահման և քաղաքական հետապնդումների մեջ: Դեկտեմբերի 5-ին Ազգային անվտանգության ծառայություն հրավիրվեց ՀՀԿ բարձրաստիճան մի թեկնածու՝ պետական դավաճանության հետ կապված իր մեղադրանքների մասով բացատրություն տալու: Թեկնածուն չներկայացավ:

դաշտում:<sup>48</sup> Որոշ ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ նշեցին, որ ենթադրյալ «կեղծ» ֆեյսբուքյան օգտահաշիվների միջոցով իրականացավում էր սադրանք, տարածվում ապատեղեկատվություն և առանձին թեկնածուների դեմ ուղղված վիրավորական արտահայտություններ:<sup>49</sup>

Քարոզարշավի կուլմինացիոն կետը դեկտեմբերի 5-ին Հանրային Հ1 հեռուստաընկերության ուղիղ եթերում հեռարձակված երեք ժամ տևողությամբ բանավեճն էր, որի ընթացքում բոլոր համապետական ցուցակների առաջին համարները փոխադարձ հարգանքի և ընդհանուր համերաշխության մթնոլորտում քննարկեցին այնպիսի հարցեր, ինչպիսիք են ազգային անվտանգությունը, կոռուպցիայի դեմ պայքարը, դատական իշխանության անկախությունը, անցումային արդարադատությունը և տնտեսական զարգացումը:

*Իշխանությունները պետք է կազմակերպեն ընտրողների ուսուցման արշավներ՝ խթանելու ՁԼՄ գրագիտությունը, պատասխանատվությունն ու սոցիալական ներառումը: Մադրիչ և վիրավորական լեզուն բացառելու համար ընտրապայքարի մասնակիցները կարող են մշակել և կիրառել վարքագծի կանոններ և ինքնուրույն ձևավորել լավ գործելակերպ:*

Օրենքն արգելում է պետական պաշտոնյաներին քարոզարշավ իրականացնել պաշտոնական լիազորությունների կատարմանը զուգահեռ, ինչպես նաև քարոզչության նպատակներով օգտագործել հանրային տարածքներ, պաշտոնական տրանսպորտային միջոցներ և այլ նյութեր:<sup>50</sup> Վարչական ռեսուրսի չարաշահումը և հանրային ծառայողների նկատմամբ ճնշումները կանխելու նպատակով իշխանությունները հանրային նախազգուշացումներ են հրապարակել և համապատասխան արգելքների մասին իրազեկման աշխատանքներ տարել դպրոցների ղեկավար աշխատակազմի,

<sup>48</sup> Հղում անելով 2018թ. Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ «Իմ քայլը» դաշինքի թեկնածուի կողմից արված հայտարարությանը՝ մի շարք ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ ուշադրություն հրավիրեցին հանրային դիսկուրսի վրա, որը քաղաքական ուժերին հակադրում էր «սևի» ու «սպիտակի», կամ որը տարբերակում էր «հին» և «նոր» Հայաստանը: Սոցիալական ցանցերի քումենթային տիրույթում օգտատերերը հաճախ օգտագործում էին պառակտիչ հռետորաբանություն, որն ուղեկցվում էր ԼԳԲՏ և կրոնական փոքրամասնություններին թիրախավորող անձնական հարձակումներով, գոեհաբանություններով և ծաղրական լեզվով:

<sup>49</sup> Որոշ անհատ թեկնածուներ, ինչպես նաև կուսակցություններ և դաշինքներ տեղեկացրին ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ վարում են իրենց սեփական ֆեյսբուքյան էջերը և հեռացնում իրենց ուղղված քննադատական կամ վիրավորական մեկնաբանությունները: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սակայն նկատեց, որ ընտրապայքարի մասնակիցները միշտ չէ, որ հեռացնում էին իրենց ընտրական հակառակորդներին ուղղված քննադատական մեկնաբանությունները:

<sup>50</sup> Նոյեմբերի 19-ին և 21-ին Գեղարքունիք և Արագածոտն կատարած այցերի ընթացքում գործող վարչապետը կոչ արեց հանրահավաքի մասնակիցներին աջակցել իրեն գալիք ընտրություններում: Նա արձակուրդ էր վերցրել նոյեմբերի 26-ից մինչև դեկտեմբերի 5-ը քարոզարշավ իրականացնելու համար: Արագածոտնի, Արարատի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու, Շիրակի և Տավուշի մարզպետները, որոնք նույնպես առաջադրվել էին, արձակուրդ էին վերցրել կամ հրաժարականի դիմում ներկայացրել քարոզարշավին մասնակցելու նպատակով:

առողջապահության ոլորտի աշխատողների, ՏԻՄ պաշտոնյաների և այլոց շրջանում:<sup>51</sup>

ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ գրուցակիցներ նշեցին, որ իշխանությունների, ընտրապայքարի մասնակիցների և անձամբ ընտրողների կողմից դրսևորվել է քաղաքական կամք թույլ չտալ ձայների առքուվաճառք և այլ տիպի ընտրակեղծիքներ: Շատ գրուցակիցներ պնդում էին, որ ԲՀԿ-ն մեծ թվով քարոզարշավի աշխատողների և տեղական դիտորդների ներգրավել էր կարճաժամկետ պայմանագրային աշխատանքների մեջ: Ոմանք նաև պնդում էին, որ դա արվում էր անուղղակիորեն նրանց ձայները գնելու նպատակով՝ առանց օրենքը խախտելու:

*Իշխանությունները, կուսակցությունները, լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիները պետք է շարունակեն ընտրական գործընթացի արդարության նկատմամբ վստահությունը պահպանելուն ուղղված ջանքերը՝ ընտրակեղծիքների բոլոր ձևերն արմատախիլ անելու և մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու միջոցով:*

Կուսակցությունները հազվադեպ են կանանց ներառել իրենց քարոզարշավներում որպես կենտրոնական դեմքեր:<sup>52</sup> Կին թեկնածուները շատ քիչ դեպքերում են քարոզարշավ իրականացնել միայնակ և հազվադեպ են ելույթով հանդես եկել դիտարկված քարոզարշավային հանրահավաքներում: ԺՀՄԻԳ ԸԴԱ կողմից դիտարկված հանրահավաքների մասնակիցների գերակշիռ մասը տղամարդիկ էին. մարզերում կազմակերպված հանրահավաքներում կանայք կազմում էին մոտ 15 տոկոս, իսկ Երևանում՝ մոտ 30 տոկոս: Որոշ կին թեկնածուներ իրենց սեռով պայմանավորված դարձել են նաև ստորացնող հռետորաբանության թիրախ:<sup>53</sup>

<sup>51</sup> Երևանի քաղաքապետը և Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի, Լոռու և Տավուշի մարզպետները ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին ներկայացրին վարչական ռեսուրսի չարաշահումները կանխելու նպատակով իրենց կողմից տրված հրահանգները և ձեռնարկված միջոցները: Նոյեմբերի 19-ին գործող վարչապետը Գեղարքունիք կատարած [այցի ընթացքում](#) տեղեկացրեց դպրոցների ղեկավար անձնակազմին և ՏԻՄ պաշտոնյաներին քարոզարշավում իրենց ներգրավման սահմանափակումների մասին: [Նոյեմբերի 15-ի կառավարության նիստի ժամանակ](#) գործող վարչապետը հիշեցրեց կառավարության անդամներին քարոզարշավի ընթացքում վարչական ռեսուրսի չարաշահման արգելիքների մասին: Դեկտեմբերի 3-ին Կոտայքի մարզում առաջադրված մոտ 100 թեկնածուների հետ հանդիպման ընթացքում Ոստիկանության պետը ևս մեկ անգամ կրկնեց, որ ընտրակաշառքի կիրառումն արգելված է:

<sup>52</sup> [ԵԱՀԿ նախարարների խորհրդի թիվ 7/09 որոշման](#) 3-րդ պարբերությունը կոչ է անում մասնակից պետություններին «խրախուսել բոլոր քաղաքական գործիչներին խթանելու կանանց և տղամարդկանց հավասար մասնակցությունը քաղաքական կուսակցություններում՝ նպատակ ունենալով հասնել առավել հավասարակշռված գեղդերային ներկայացվածության ընտրովի պետական պաշտոններում՝ որոշումներ կայացնող օղակի բոլոր մակարդակներում»:

<sup>53</sup> Չնայած ընտրացուցակների առաջին համարներում ընդգրկված որոշ և՛ կին, և՛ տղամարդ թեկնածուներ տեղեկացրին ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ իրենց նկատմամբ առցանց տիրույթում կիրառվում է խիստ և նվաստացուցիչ բառապաշար, կին թեկնածուներն առավել հաճախ էին ստանում սեռով պայմանավորված բացասական մեկնաբանություններ: Քարոզարշավում կանանց մասնակցության հարցերով զբաղվող քացաքացիական հասարակության կազմակերպություններից մեկի համաձայն՝ երեք բարձրաստիճան կին թեկնածուներ՝ Լենա Նազարյանը («Իմ քայլը» դաշինք), Նաիրա Զոհրաբյանը (ԲՀԿ) և Արփինե Հովհաննիսյանը (ՀՀԿ) դարձել էին հատկապես անհարգալից լեզվի կիրառման թիրախներ առցանց տիրույթում:

Ընտրական գործընթացի բոլոր շահառուների շրջանում պետք է իրականացվի իրազեկության բարձրացում քաղաքական և հանրային կյանքում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության կարևորության վերաբերյալ՝ հատուկ շեշտադրելով քաղաքական կուսակցություններում կանանց դերակատարությունը: Պետք է դիտարկել կին թեկնածուների առաջնության հատուկ միջոցների խթանումը: Դա կարող է արվել թերնեկայացված սեռի թեկնածուներին համապետական ցուցակների յուրաքանչյուր երկրորդ դիրքում ընդգրկելու միջոցով:

## X. ՔԱՐՈՋԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նախընտրական հիմնադրամը կարող է ներառել դրամական մուծումներ և ապրանքներ ու ծառայություններ ընտրողներից, թեկնածուներից և քաղաքական կուսակցություններից:<sup>54</sup> Մուծումները իրավաբանական անձանցից, օտարերկրյա և անանուն աղբյուրներից չեն թույլատրվում:<sup>55</sup> Օրենքը նախընտրական ծախսերի նկատմամբ կիրառում է առավելագույն շեմ՝ 500 մլն ՀՀԴ չափով (մոտ 910.000 եվրո) յուրաքանչյուր կուսակցության և դաշինքի համար: ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցների մեծ մասն այդ շեմը համարել է ողջամիտ:

Լրատվամիջոցներով, հանրային միջոցառումների և տպագիր նյութերի միջոցով իրականացվող քարոզչության ծախսերը պետք է կատարվեն նախընտրական հիմնադրամից:<sup>56</sup> Միննույն ժամանակ կազմակերպչական ծախսերը, ինչպես օրինակ գրասենյակային տարածքների, փոխադրման, հաղորդակցության ծախսերը և քարոզչական թիմի աշխատակիցների վճարները, կարող են կատարվել այլ աղբյուրներից և չներառվել քարոզարշավի ֆինանսական հայտարարագրերում, եթե նույնիսկ կատարվել են պաշտոնական քարոզարշավի ժամանակահատվածում: Նույնիսկ հայտարարագրում ներառվելու դեպքում այդպիսի ծախսերը չեն մտնում քարոզչական ծախսերի առավելագույն շեմի մեջ:<sup>57</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն տեղեկություններ է ստացել տարբեր ընտրական շահառուներից, այդ թվում անձամբ թեկնածուներից, որ սեփական քարոզարշավն ուղղակիորեն ֆինանսավորելով՝ որոշ թեկնածուներ շրջանցել են իրենց

<sup>54</sup> Համապատասխանաբար մինչև 500.000 ՀՀԴ, 5 մլն. ՀՀԴ և 100 մլն. ՀՀԴ: Ոչ նյութական նվիրատվությունների մասին հաշվետվություն ներկայացվում է ըստ դրանց շուկայական գնի:

<sup>55</sup> Ընտրապայքարի որոշ մասնակիցներ ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրին, որ, հաշվի առնելով Սփյուռքի ակտիվ դերակատարությունը՝ որոշ նվիրատվությունների ծագումը և նվիրատուների քաղաքացիությունը պարզելը գործնական դժվարություններ է ստեղծում օրենքի պահանջի կատարման համար:

<sup>56</sup> Ինչպես պահանջվում է օրենքով, ընտրապայքարի բոլոր մասնակիցները հատուկ նախընտրական հիմնադրամներ են բացել մինչև նոյեմբերի 23-ը:

<sup>57</sup> 2003թ.-ի «քաղաքական կուսակցությունների և քարոզարշավների ֆինանսավորման հարցում կոռուպցիայի դեմ ընդհանուր կանոնների մասին [ԵՆ Նախարարների կոմիտեի Հանձնարարականի Rec\(2003\)4](#) 10-րդ հոդվածի համաձայն՝ «պետությունները պետք է պահանջեն ընտրարշավի համար կատարված բոլոր ուղղակի և անուղղակի ծախսերի վերաբերյալ հատուկ հայտարարագրերի կազմում՝ ըստ յուրաքանչյուր քաղաքական կուսակցության, ընտրացուցակի և յուրաքանչյուր թեկնածուի»:

առաջադրող կուսակցության կամ դաշինքի հիմնադրամները, ինչը հակասում է օրենքին:<sup>58</sup> Բազմաթիվ ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ նաև ընդունեցին, որ առկա օրենսդրական բացերը կարող են շահագործվել ֆինանսական թափանցիկության սկզբունքները շրջանցելու նպատակով, ինչն իր մեջ պարունակում է քարոզարշավի հավասար պայմանների խաթարման վտանգ:

Օրենքի պահանջի համաձայն՝ ընտրապայքարի բոլոր մասնակիցները քարոզարշավի ֆինանսավորման միջանկյալ և վերջնական հայտարարագրեր են ներկայացրել ԿԸՀ-ի վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն (ՎՎԾ), որը պատասխանատու է քարոզարշավի վերահսկման համար:<sup>59</sup> Հայտարարագրերը ներառել են նախընտրական հիմնադրամների մուծումների գումարները, քարոզչական ծախսերը և չօգտագործված միջոցները: Ի հավելումն դրա՝ երեք աշխատանքային օրը մեկ Կենտրոնական բանկը ՎՎԾ-ին ամփոփ տեղեկանք է ներկայացրել ընտրապայքարի բոլոր մասնակիցների հիմնադրամներով կատարված գործարքների մասին: ՎՎԾ-ն քարոզարշավի ֆինանսավորման հայտարարագրերը հրապարակել է ԿԸՀ կայքէջում, ինչպես նաև ամփոփ տեղեկանքներ է ներկայացրել յուրաքանչյուր կուսակցության / դաշինքի մուծումների և ծախսերի ընդհանուր գումարների մասին՝ դրանով նպաստելով ֆինանսական թափանցիկությանը:<sup>60</sup>

Նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը ստացված և ծախսված միջոցների մասին հաշվետվություններ ներկայացնելու հստակ օրենսդրական պահանջներ չկան: ԺՀՄԻԳ ԸԴԱ շատ զրուցակիցներ ուշադրություն հրավիրեցին այն փաստի վրա, որ ընտրապայքարի որոշ մասնակիցներ քարոզչական նյութեր են ձեռք բերել նախքան նախընտրական հիմնադրամներ բացելը, ինչը պոտենցիալ անճշտություններ և անհամապատասխանություններ է ներմուծում ընտրապայքարի մասնակիցների հայտարարագրերի մեջ:<sup>61</sup> Դա՝ կազմակերպչական ծախսերի մասին հաշվետվություն ներկայացնելու պահանջի բացակայության հետ մեկտեղ, սահմանափակում է հաշվետվությունների համակարգի արժանահավատությունը և քարոզարշավի հետ կապված իրական ծախսերի մասին ընտրական շահառուներին հասանելի տեղեկատվության թափանցիկությունը:

*Ինչպես նշված է ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկում, իրավական դաշտը պետք է բարեփոխվի՝ սահմանելով քարոզարշավային բոլոր մուծումների ու ծախսերի*

<sup>58</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նման տեղեկություններ է ստացել Գեղարքունիքում, Կոտայքում, Մասիսում, Շիրակում, Վայոց Ձորում և Երևանում:

<sup>59</sup> Միջանկյալ հաշվետվությունները ՎՎԾ-ին ներկայացվել են դեկտեմբերի 5-ին, իսկ վերջնական հաշվետվությունները՝ մինչև դեկտեմբերի 13-ը:

<sup>60</sup> Քարոզարշավի ընթացքում հինգ անգամ հրապարակվել են ամփոփ տվյալներ: Ըստ ՎՎԾ-ի՝ ամենամեծ ֆինանսական միջոցները հավաքագրել է «Իմ քայլը» դաշինքը (մոտ 276 մլն ՀՀԴ), որին հետևում են ՀՀԿ-ն (128 մլն. ՀՀԴ) և ԲՀԿ-ն (մոտ 104 մլն. ՀՀԴ): Ընտրապայքարի նշված մասնակիցները ծախսել են համապատասխանաբար մոտ 275 մլն, 127 մլն. և 102 մլն. ՀՀԴ: Մյուս ութ մասնակիցները միասին վերցված ստացել են մոտ 175 մլն. ՀՀԴ և ծախսել մոտ 172 մլն. ՀՀԴ:

<sup>61</sup> Ըստ ՎՎԾ-ի՝ կուսակցություններն ու դաշինքները պետք է հաշվետվություն ներկայացնեն քարոզարշավին առնչվող բոլոր եկամուտների ու ծախսերի վերաբերյալ, ինչպես պահանջվում է օրենքով: Սակայն, ընտրապայքարի մասնակիցներից շատերը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրին, որ իրենք պարտավոր են հաշվետվություն ներկայացնել միայն պաշտոնական քարոզարշավի ընթացքում կատարված ծախսերի վերաբերյալ:

*մասին հաշվետվություն ներկայացնելու պահանջ՝ ներառելով կազմակերպչական և մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը կատարված ծախսերը:*

Նախընտրական հիմնադրամների մասին հայտարարագրերի ներկայացման ընթացակարգը սահմանված է ԿԸՀ-ի կողմից: Քարոզարշավի ֆինանսավորման մասին հաշվետվության գործընթացը դյուրացնելու նպատակով ՎՎԾ-ն ուղենիշեր է ներկայացրել ընտրապայքարի մասնակիցների մեծ մասին և նրանց հետ քննարկել կանոնակարգումները: ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատել է, որ քաղաքական կուսակցությունների, ԶԼՍ-ների և քաղաքացիական հասարակության մոտ առկա է սահմանափակ հետաքրքրություն քարոզարշավի ֆինանսավորման վերահսկման նկատմամբ:

Մինչ ընտրապայքարի մասնակիցները պարտավոր են զեկույցել մուծումների և ծախսերի գումարների, ինչպես նաև ծախսերի կատարման նպատակների մասին, հանրային հայտարարագրերը չեն պարունակում որևէ տեղեկություն քարոզարշավի նվիրատուների մասին:<sup>62</sup> ՎՎԾ-ն միայն ստուգում է, թե արդյոք մուծումներն ու ծախսերը օրենքով սահմանված սահմանաչափերի մեջ են, թե ոչ, և թե արդյոք ոչ նյութական նվիրատվությունների գնահատումը ճիշտ է, սակայն այն չի ստուգում, թե արդյոք դրանք ճշգրտորեն են արտահայտում քարոզարշավի իրական ֆինանսական միջոցները:<sup>63</sup> ՎՎԾ-ն ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ այն սովորաբար չի իրականացնում քարոզարշավի ֆինանսավորման աուդիտ սեփական նախաձեռնությամբ, սակայն կարող է ընտրապայքարի մասնակիցներից լրացուցիչ տվյալներ պահանջել, եթե տեղեկություններ է ստանում օրենքի հնարավոր խախտումների վերաբերյալ: ՎՎԾ-ն նաև նշեց, որ իր աշխատակազմի թվի ավելացումը կնպաստեր իր վերահսկողական գործառույթի բարելավմանը:<sup>64</sup> Դեկտեմբերի 15-ին, ֆինանսական հաշվետվությունների ներկայացումից երկու օր անց և ընտրությունների վերջնական արդյունքների հրապարակումից մեկ օր առաջ, ՎՎԾ-ն եզրակացրեց, որ քարոզարշավի ֆինանսավորման խախտումներ չեն արձանագրվել:

*Օրենսդիրն ու ԿԸՀ-ն պետք է հստակորեն սահմանեն ՎՎԾ-ի՝ ֆինանսական վերահսկման մանդատը և վերջինիս տրամադրեն անհրաժեշտ միջոցներ և մարդկային ռեսուրսներ՝ ապահովելու, որ ՎՎԾ-ն իրականացնի քարոզարշավի ֆինանսավորման պատշաճ վերահսկողություն:*

<sup>62</sup> Նվիրատուների մասին տեղեկատվությունը ՎՎԾ-ին տրամադրվում է Կենտրոնական բանկի կողմից եկամուտների օրինականության ստուգումների նպատակով:

<sup>63</sup> Ըստ ՎՎԾ-ի՝ ընտրապայքարի մասնակիցների կողմից Ֆեյսբուքում գովազդի վրա արված ծախսերը չեն հայտարարագրվել, և ՎՎԾ-ն ընդունեց, որ հնարավորություն չունի վերահսկել նման ծախսերը:

<sup>64</sup> Բացի երեք մշտական աշխատակիցներից, խարհրդարանական խմբակցություններն այս ընտրությունների համար չորս աուդիտորներ են նշանակել ՎՎԾ-ում: Սակայն նշանակված աուդիտորները ներգրավված չեն եղել ամենօրյա աշխատանքների մեջ, այլ միայն զբաղվել են վերահսկման գործընթացի դիտարկմամբ՝ հոգուտ իրենց կուսակցությունների:



## XI. ԶԱՆԳՎԱԾՍՑԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

### A. ԶԼՄ ՄԻՋԱՎԱՅՐ

ԶԼՄ միջավայրը բազմազան է և ներառում է երկրում գործող ավելի քան 160 ավանդական լրատվամիջոցներ և ավելի քան 200 առցանց լրատվական կայքեր:<sup>65</sup> Մինչ հեռուստատեսությունը քաղաքական տեղեկատվության հիմնական աղբյուրն է, հատկապես մայրաքաղաքից դուրս, առցանց լրատվական կայքերն ու սոցիալական ցանցերը, մասնավորապես Ֆեյսբուքը, հանդիսանում են քաղաքական լրատվության և բանավեճի նշանակալի հարթակներ: Ըստ ԺՀՄԻԳ ԸԴԱ մի շարք գրուցակիցների, տեղական հեռարձակողների զարգացումը մնում է որոշ չափով մտահոգիչ, քանի որ թվայնացման ընթացիկ գործընթացում լիցենզավորման համակարգը համարվում է վիճահարույց:<sup>66</sup>

Գովազդային շուկան սահմանափակ է, և միայն մի քանի ինքնաբավ լրատվամիջոցներ կան, ուստի դրանց մեծ մասը կախված է տարբեր տեսակի արտաքին աջակցություններից:<sup>67</sup> Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը չի պահանջում լրատվամիջոցների սեփականատերերի մասին ամբողջական տեղեկատվության բացահայտում:<sup>68</sup> Ըստ բազմաթիվ ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցների՝ մեծ թվով համապետական մասնավոր լրատվամիջոցներ սերտորեն փոխկապակցված են քաղաքական կուսակցությունների հետ, այդ թվում՝ ֆինանսապես, ինչը շատ արդյունավետ կերպով շրջանցում է այն օրենսդրական դրույթները, որոնցով քաղաքական

<sup>65</sup> Ըստ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի (ՀՌՀ)՝ երկրում կան 103 հեռուստաալիքներ, որոնցից 8-ը՝ համապետական ծածկույթով, և 24 ռադիոկայաններ: Կա նաև մոտ 40 անուն տպագիր մամուլ:

<sup>66</sup> ՀՌՀ որոշման համաձայն՝ արտոնագրերի մրցույթը նախատեսում է միայն մեկ թվային արտոնագրի տրամադրում յուրաքանչյուր մարզին: Մինչ մարզային անալոգային հեռուստաընկերությունների արտոնագրերը երկարացվել են մինչև 2020թ.-ը և ներկայումս մարզերում հեռարձակվում են և՛ անալոգային, և՛ թվային հեռուստաալիքներ, ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ գրուցակիցներ պնդում էին, որ մարզային արտոնագրերի թվի կրճատումը ԶԼՄ բազմակարծության սահմանափակումներ է առաջ բերում:

<sup>67</sup> Հոկտեմբերի 6-ին համապետական 22 հեռուստաընկերության սեփականատերը կալանավորվել էր կաշառակերության մեղադրանքով: Ալիքի ֆինանսավորման համար օգտագործվող նրա անձնական հաշիվները սառեցվել էին՝ ենթադրաբար խաթարելով հեռուստաընկերության աշխատանքը:

<sup>68</sup> Եվրոպայի խորհրդի 2018թ. [ԶԼՄ բազմակարծության և լրատվամիջոցների սեփականության թափանցիկության ուղենիշերի](#) (CM/Rec(2018)1) Հավելվածի 3.5-րդ պարբերությունը նշում է, որ «պետությունները կարող են լրատվամիջոցների վերահսկողությունը որոշելու չափանիշեր սահմանել՝ բաց կերպով քննության առնելով ուղղակի կամ շահության վերահսկողությունը: Համապատասխան չափանիշերը կարող են ներառել լրատվամիջոց(ներ)ում սեփականատիրական, ֆինանսական կամ քվեարկության մասնակցող ուժերի հարաբերակցության որոշումը, ինչպես նաև տարբեր մակարդակներում այնպիսի ուժերի հարաբերակցության որոշումը, որոնք տանում են տվյալ լրատվամիջոց(ներ)ի ռազմավարական որոշումների կայացման գործընթացի, այդ թվում՝ խմբագրական քաղաքականության նկատմամբ վերահսկողության կամ ուղղակի կամ անուղղակի ազդեցության»:

միավորներին արգելվում է հեռարձակող ընկերություններ հիմնադրել և դրանց ծրագրային գործունեությանը հովանավորչության տեսքով միջամտել:<sup>69</sup>

*Միջոցներ պետք է ձեռնարկվեն լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկության ապահովման ուղղությամբ՝ սահմանելով վերջնական սեփականատերերի հստակ բացահայտման պահանջ: Լրատվամիջոցների սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների մասին ամբողջ տեղեկատվությունը պետք է հրապարակվի:*

Հանրային հեռուստաընկերությունը ֆինանսավորվում է պետական բյուջեից և սովորաբար ընկալվում է որպես կառավարամետ խմբագրական քաղաքականություն վարող ընկերություն:<sup>70</sup> Միննույն ժամանակ ԺՀՄԻԳ ԸԴԱ բազմաթիվ գրուցակիցներ այն դիտում են որպես մեդիա միջավայրի կարևոր բաղադրիչ և որակյալ ծրագրային հաղորդումների աղբյուր:

Բազմաթիվ ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցներ նշեցին, որ 2018թ. ապրիլից նկատելի է ՋԼՄ ազատության և բազմակարծության բարելավում: Այնուհանդերձ, ոմանք նշեցին նաև, որ այն ինչ շատերն ընդհանուր առմամբ անվանում են «հետհեղափոխական» մթնոլորտ, մարտահրավերներ է ստեղծում անկախ քննադատական լրագրության համար, և որ հանրային դիսկուրսը նպաստավոր չէ կառավարության, և մասնավորապես գործող վարչապետի հասցեին քննադատությունների հարցում:

## B. ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

Արտահայտման ազատությունը, որը երաշխավորվում է սահմանադրությամբ և օրենքներով, պահպանվել է քարոզարշավի ընթացքում: Զրպարտությունն ապաքրեականացվել էր 2010թ.-ին, և 2011թ. սահմանադրական դատարանի որոշումներից

<sup>69</sup> Տես՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 16-րդ և 17-րդ հոդվածները: ԵԽԽՎ 2254 (2019) բանաձևի (Մամուլի ազատությունը որպես ժողովրդավարական ընտրությունների պայման) 8.9 պարբերությունը կոչ է անում անդամ երկրներին «լիարժեք թափանցիկություն ապահովել հանրության համար, երբ լրատվամիջոցների սեփականատերերը քաղաքական կուսակցություններ կամ քաղաքական գործիչներ են»:

<sup>70</sup> ԵԽԽՎ 2254 (2019) բանաձևի (Մամուլի ազատությունը որպես ժողովրդավարական ընտրությունների պայման) 8.10 պարբերությունը կոչ է անում անդամ երկրներին «երաշխավորել հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությունը՝ վերջ դնելով դրանց վրա ազդեցություն գործելու, կամ դրանք կառավարական լրատվամիջոցների վերածելու ցանկացած փորձի: Հանրային լրատվամիջոցի օգտագործումը կոնկրետ քաղաքական կուսակցության կամ թեկնածուի առաջնորդման նպատակով պետք է որակվի որպես հանրային միջոցների ապօրինի թյուրօգտագործում»: Հանրային հեռարձակողների ֆինանսավորման վերաբերյալ ԵԽԽՎ [1878 \(2009\) Հանձնարարականի](#) 14-րդ հոդվածում ասվում է. «Հանրային լրատվամիջոցի ֆինանսավորումը կարող է իրականացվել հեռարձակման արտոնագրի պարզ վճարի, հարկման, պետական սուբսիդավորման, բաժանորդային վճարների, գովազդների և հովանավորչական եկամուտների կամ այլ հատուկ վճարովի ծառայությունների մատուցման ... ինչպես նաև իրենց տեսաձայնային արխիվների շահագործման միջոցով... Հանրային լրատվամիջոցները կարող են ունենալ խառը տիպի ֆինանսավորում, ինչպես այլ հանրային մշակութային հաստատություններ ... Այդ ֆինանսավորման եղանակներից յուրաքանչյուրը պետք է թույլ տա հանրային հեռարձակողներին համապատասխանել լայն հանրության համար մատչելիության և հասանելիության պահանջին»:

մեկը խրախուսում էր ոչ դրամական միջոցների կիրառումը, ինչպես օրինակ՝ հրապարակային ներողությունը և հերքումը:

Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ բոլոր հեռարձակողները ընտրապայքարի մասնակիցների քարոզարշավի մասին իրենց եթերում ներկայացնեն «անկողմնակալ և դատողություններից զերծ տեղեկատվություն»: Ըստ օրենքի՝ ՀՌՀ-ն պաշտոնական քարոզարշավի ընթացքում մշտադիտարկում է բոլոր հեռարձակողներին: Ողջունելի է, որ ՀՌՀ-ն լրատվական լուսաբանման վերաբերյալ օրենսդրական դրույթը մեկնաբանեց որպես պարտավորություն հեռարձակողների համար՝ ընտրապայքարի մասնակիցներին հավասար հնարավորություններ տրամադրելու, յուրաքանչյուրին հավասար տևողությամբ լուսաբանման ժամանակ հատկացնելու փոխարեն: Դրա արդյունքը եղավ քարոզարշավի առավել բազմազան լուսաբանումը:

ՀՌՀ-ն իր կողմից իրականացնում է ՁԼՄ մշտադիտարկում: Այն սակայն կենտրոնանում է միայն քանակական վերլուծության վրա, առանց գնահատելու կոնտենտի տոնայնությունն ու այլ ասպեկտները: Բացի այդ, մշտադիտարկվող հեռարձակողների եթերի մասին տվյալները տրամադրվել են հենց իրենց՝ հեռարձակողների կողմից և միայն հազվադեպ են ստուգվել ՀՌՀ-ի կողմից:<sup>71</sup> Օրենքի պահանջի համաձայն՝ ՀՌՀ-ն հրապարակել է երկու մշտադիտարկման զեկույց, մեկը ընտրությունների օրվանից առաջ, իսկ մյուսը՝ հետո (դեկտեմբերի 5-ին և 13-ին):<sup>72</sup> ՀՌՀ զեկույցները ՁԼՄ կանոնակարգումների որևէ խախտում չեն արձանագրել:

*Կարելի է դիտարկել ՀՌՀ-ի՝ քաղաքական լուսաբանման ամբողջական և անկախ մոնիթորինգ իրականացնելու կարողությունների զարգացման հնարավորությունը, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ինչպես նշված է ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկում, կարելի է նաև դիտարկել մեթոդոլոգիայի զարգացման հնարավորությունը՝ թույլ տալու ամենօրյա որակական և քանակական մշտադիտարկում՝ ներառյալ լուսաբանման տոնայնությունը:*

Արտահերթ ընտրությունների ժամանակ յուրաքանչյուր մասնակից ուներ մինչև 30 րոպե անվճար եթերաժամանակի իրավունք Հանրային հեռուստաընկերությամբ և մինչև 60 րոպե՝ Հանրային ռադիոյով: Ինչպես պահանջվում էր օրենքով, նոյեմբերի 20-ին ԿԸՀ-ը վիճակահանությամբ իրականացրեց եթերաժամի բաշխում, իսկ հանրային հեռարձակողներն այն տրամադրեցին ընտրապայքարի բոլոր մասնակիցներին:<sup>73</sup> Բոլոր կուսակցություններն ու դաշինքները, բացի Ազգային առաջընթաց կուսակցությունից,

<sup>71</sup> Մշտադիտարկումը կենտրոնացել է անվճար և վճարովի եթերաժամի տրամադրման, ինչպես նաև լրատվական թողարկումներում և այլ ծրագրերում ընտրապայքարի մասնակիցներին տրամադրված եթերաժամի չափումների վրա: ՀՌՀ-ն մշտադիտարկել է ընդհանուր թվով 60 հեռարձակողների, որից 8-ին (5 հեռուստաալիքներ և 3 ռադիոկայաններ)՝ ամենօրյա ռոտացիոն կարգով:

<sup>72</sup> Ձեկույցները հասանելի են ՀՌՀ [կայքէջում](#), ինչպես նաև ԿԸՀ [կայքէջում](#):

<sup>73</sup> Անվճար եթերաժամը հանրային հեռուստաընկերությամբ տրամադրվել է ժամը 19:30-ից, իսկ հանրային ռադիոյով՝ 13:30-ից և 19:45-ից: Երեկոյան ռադիոժամը հիմնականում ծրագրված էր ժամը 21:15-ին, սակայն ավելի ուշ փոխարինվեց ավելի վաղ ժամով՝ տեղի տալով այն մտահոգություններին, որ սահմանված ժամն այնքան էլ գրավիչ չէ ունկնդիրների համար, ինչպես բարձրաձայնվել էր ընտրապայքարի մի շարք մասնակիցների կողմից վիճակահանության ժամանակ:

օգտվեցին նաև քաղաքական գովազդի համար եթերաժամանակ ձեռք բերելու իրենց իրավունքից և՛ հանրային, և՛ մասնավոր լրատվամիջոցներում:<sup>74</sup>

### C. ՁԼՄ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Նոյեմբերի 19-ին ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն սկսեց իրականացնել ՁԼՄ մշտադիտարկում՝ որակական և քանակական վերլուծությամբ:<sup>75</sup> Պաշտոնական քարոզարշավից առաջ և հետո ընկած ժամանակահատվածում ՁԼՄ կողմից քաղաքական զարգացումների լուսաբանման նկատելի տարբերություններ կային, այն առումով, որ նախքան քարոզարշավի մեկնարկը որոշ հեռարձակողներ տարբեր քաղաքական հաղորդումներում ակնհայտ նախապատվություններ էին ցուցաբերում (*Կենտրոն հեռուստաընկերություն, Երկիր Մեդիա*):

Պաշտոնական քարոզարշավի մեկնարկից հետո բոլոր մշտադիտարկվող հեռարձակողները զգալիորեն կրճատեցին կառավարության ու գործող վարչապետի լուսաբանումը: Մասնավորապես հանրային Հ1 հեռուստաընկերությամբ կառավարության լուսաբանումը 79 տոկոսից իջավ 18 տոկոսի՝ տոնայնության առումով մնալով բացառապես դրական կամ չեզոք:

*Իշխանությունները պետք է շարունակեն նպաստել հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությանը և խթանեն քաղաքացիների համար անկողմնակալ, քննադատական և վերլուծական քաղաքական տեղեկատվության և ծրագրերի հասանելիությունը՝ այդ թվում այն դեպքերում, երբ լուսաբանվում է պետական պաշտոնյաների գործունեությունը: Ի հավելումն դրա, կարող է դիտարկվել հանրային լրատվամիջոցների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունը:*

Տարբեր տիպի քաղաքական հաղորդումները, այդ թվում՝ քաղաքական ծրագրերի ու քարոզարշավային թեմաներին նվիրված քննարկումները, նպատակաուղղված էին կուսակցությունների ու դաշինքների մասին ընտրողներին տեղեկատվություն տրամադրելուն: Դրական է, որ Հանրային հեռուստաընկերությունը հեռարձակեց 11 բանավեճ, այդ թվում ուղիղ հեռարձակմամբ՝ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների ու դաշինքների առաջին համարների մասնակցությամբ բանավեճը:<sup>76</sup>

<sup>74</sup> 39 հեռարձակողներ ընտրապայքարի մասնակիցներին վճարովի գովազդի եթերաժամանակ ձեռք բերելու հնարավորություն են ընձեռել:

<sup>75</sup> Հինգ հեռուստաալիքների մշտադիտարկումը՝ Հ1 (*հանրային*), *Արմենիա Թի-Վի*, *Կենտրոն Թի-Վի*, *Շանթ Թի-Վի* և *Երկիր Մեդիա* (մասնավոր ալիքներ) իրականացվել է ամեն օր 18:00-ից մինչև 24:00-ն: Մշտադիտարկվել են նաև երեք տպագիր օրաթերթերի՝ *Հայաստանի Հանրապետություն* (պետական ֆինանսավորմամբ), *Առավոտ* և *Հայկական ժամանակ* (մասնավոր), ինչպես նաև երեք առցանց լրատվական կայքերի՝ [www.azatutyun.am](http://www.azatutyun.am), [www.news.am](http://www.news.am) և [www.lin.am](http://www.lin.am) քաղաքական հոդվածները:

<sup>76</sup> Հ1-ով հեռարձակված առաջին համարների բանավեճը հասանելի էր նաև ժողովրդականություն վայելող այլ առցանց աղբյուրներով՝ [www.azatutyun.am](http://www.azatutyun.am) և [www.civilnet.am](http://www.civilnet.am)։ Մի շարք այլ լրատվամիջոցներ, ինչպես օրինակ *Հինգերորդ ալիքը*, *Ազատություն* առցանց *Թի-Վի*-ն (RFE/RL հայկական մասնաճյուղի մաս), [www.lin.am](http://www.lin.am)-ը, ինչպես նաև մի շարք մարզային լրատվամիջոցներ (*Ալտ Թի-Վի*, *Քյավառ Թի-Վի*, *Լոռի Թի-Վի*, *Ցայգ Թի-Վի*) կազմակերպել են թեկնածուների միջև բանավեճեր: Դրանցից մի քանիսը հրավիրել էին թեկնածուների տարբեր կատեգորիաներ, ինչպես օրինակ՝ կանանց և երիտասարդ թեկնածուների:

*Իշխանությունները կարող են դիտարկել հանրային հեռարձակողների համար նախընտրական քարոզարշավի շրջանում բանավեճեր կազմակերպելու պարտավորության սահմանում:*

Պաշտոնական քարոզարշավի ընթացքում մշտադիտարկվող ալիքների մեծ մասը տեսանելի ջանքեր էր գործադրում իրենց լրատվական թողարկումներում ընտրապայքարի բոլոր մասնակիցներին անաչառ կերպով լուսաբանելու համար՝ նպաստելով ընտրողների՝ գիտակցված ընտրություն կատարելու համար հասանելի տեղեկատվության բազմազանությանը:

Հանրային Հ1 հեռուստաընկերությունը բոլոր մասնակիցներին ներկայացրել է հավասարակշիռ ձևով՝ յուրաքանչյուրին տրամադրելով 6-ից 7 տոկոս բացառապես դրական կամ չեզոք տոնայնությամբ լուսաբանում: Մասնավոր *Արմենիա հեռուստաընկերությունը* 6-ից 9 տոկոս էթերաժամ է հատկացրել ՔՈ-ին, ՔԺՎԿ-ին, «Իմ քայլը» դաշինքին, ԱԱԿ-ին, ՕԵԿ-ին և ՀՀԿ-ին, և 1-ից 3 տոկոս՝ մյուս մասնակիցներին: *Շանթ հեռուստաընկերությունը* 13 տոկոս հավասարակշիռ տոնայնությամբ լուսաբանում է տրամադրել ՀՀԿ-ին՝ յոթ այլ մասնակիցների (ՀՅԴ, ԼՀԿ, ՔՈ, «Իմ քայլը» դաշինք, ԲՀԿ, ՕԵԿ և «Մենք» դաշինք) տրամադրելով 7-ից 9 տոկոս: Այս երկու մասնավոր ալիքներով էլ տոնայնությունը հիմնականում դրական կամ չեզոք է եղել, թեև «Իմ քայլը» դաշինքի և ՀՀԿ-ի հասցեին նաև որոշ քննադատական արտահայտություններ են հնչել *Շանթ հեռուստաընկերությունով*:

Այնուհանդերձ, կոնկրետ կուսակցությունների հետ փոխկապակցված լրատվամիջոցները նախապատվելի վերաբերմունք են ցուցաբերել ընտրապայքարի համապատասխան մասնակիցների նկատմամբ: Օրինակ՝ *Երկիր Մեդիան* 23 տոկոս բացառապես դրական կամ չեզոք լուսաբանում է տրամադրել ՀՅԴ-ին՝ 10-ից 13 տոկոս տրամադրելով ԼՀԿ-ին, «Իմ քայլը» դաշինքին և ՀՀԿ-ին՝ հիմնականում չեզոք տոնայնությամբ: Այդ կերպ նաև *Կենտրոն հեռուստաընկերությունը* ԲՀԿ-ին 15 տոկոս մեծամասամբ դրական տոնայնությամբ լուսաբանում է տրամադրել ԼՀԿ-ին, «Իմ քայլը» դաշինքին, ՄԾՀԿ-ին և ՀՀԿ-ին տրամադրելով 9-ից 12 տոկոս հիմնականում չեզոք լուսաբանում: Նույն կերպ, «Իմ քայլը» դաշինքն ունեցել է 45 տոկոս հիմնականում դրական լուսաբանում *Հայկական ժամանակ* թերթում, որի հետ այն փոխկապակցված է, մինչ ՀՀԿ-ն ստացել է 21 տոկոս մեծամասամբ բացասական տոնայնությամբ լուսաբանում:<sup>77</sup>

<sup>77</sup> Պետական ֆինանսավորմամբ գործող «Հայաստանի Հանրապետություն»-ում քարոզարշավի լուսաբանումն առավել սահմանափակ էր, սակայն չեզոք տոնայնությամբ և հավասարակշռված՝ տարածական տեսանկյունից: Օրաթերթն իր լուսաբանման մեծ մասը նվիրել է իշխանություններին. կառավարությունը ստացել է 37, իսկ նախագահը՝ 23 տոկոս՝ համապատասխանաբար: Բացի այդ, օրաթերթը զգալի ուշադրություն է դարձրել Ազգային ժողովի նախագահին: «Իմ քայլը» դաշինքն ամենաշատ լուսաբանված մասնակիցն էր՝ 9 տոկոսով, իսկ մյուս բոլոր մասնակիցները՝ 2-ից 5 տոկոսով: «Առավոտ»-ը արտացոլել է քարոզարշավի ամենաթեժ պահերը՝ կենտրոնանալով երկու հակառակորդ մասնակիցների՝ «Իմ քայլը» դաշինքի և ՀՀԿ-ի վրա՝ նրանց տրամադրելով համապատասխանաբար 17 և 16 տոկոս լուսաբանում և վերջինիս ներկայացնելով առավել քննադատական լույսի ներքո:

Առցանց լրատվամիջոցներն ավելի մեծ ուշադրություն են դարձրել «Իմ քայլը» դաշինքին գրավոր հրապարակումներում՝ դաշինքը ներկայացնելով առավելապես դրական կամ չեզոք տոնայնությամբ և հնչեցնելով մի շարք քննադատական արտահայտություններ, մինչ հաջորդ ամենաշատ լուսաբանվող մասնակիցների մասին տվյալները տարբեր լրատվամիջոցներում տարբեր էին:<sup>78</sup> Մշտադիտարկվող առցանց լրատվամիջոցների տեսանյութային կոնտենտում նույնպես մեծամասամբ լուսաբանվել են «Իմ քայլը» դաշինքի հրապարակած տեսանյութերը, առցանց հեռարձակումներն ու այլ նյութերը:

## XII. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

ԸԸՀ-ների և ՏԸՀ-ների դեմ բողոքները կարող են ներկայացվել համապատասխանաբար ՏԸՀ-ներ և ԿԸՀ, մինչ ԿԸՀ դեմ բողոքները ընդդատյա են վարչական դատարանին: Ընտրողների ցուցակների մասին բողոքները կարող են ներկայացվել ԱՎՎ, որի որոշումներն էլ կարող են բողոքարկվել առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարան:<sup>79</sup> Ընտրական վեճերի հետ կապված բողոքները նույնպես կարող են ներկայացվել վարչական դատարան, թեև դա հազվադեպ է պատահում: Եթե բողոքը ներկայացվել է և՛ դատարան, և՛ որևէ ընտրական հանձնաժողովի, հանձնաժողովը չպետք է քննի այն:<sup>80</sup>

Ընտրողները, ԶԼՄ ներկայացուցիչները և դիտորդները կարող են բերել միայն իրենց իրավունքների խախտումներին առնչվող բողոքներ, իսկ վստահված անձինք և թեկնածուները՝ իրենց և համապատասխան կուսակցության / դաշինքի իրավունքների խախտումներին առնչվող բողոքներ:<sup>81</sup> Կուսակցության վստահված անձինք, ԸԸՀ անդամները և համապատասխան ընտրողները կարող են բողոքարկել այլ անձի փոխարեն քվեարկության դեպքեր: Ընտրապայքարի մասնակիցները, թեկնածուները, վստահված անձինք (ձայների հաշվարկի ժամանակ ներկա եղած լինելու պայմանով) և տվյալ տեղամասային կենտրոնի ԸԸՀ-ի անդամները, որոնք գրառում են արել հատուկ կարծիք ունենալու մասին, կարող են բողոքարկել տվյալ տեղամասի ընտրությունների արդյունքները ՏԸՀ, իսկ հետո ՏԸՀ համապատասխան որոշումները բողոքարկել ԿԸՀ:

<sup>78</sup> «Իմ քայլը» դաշինքը լուսաբանվել է 27 տոկոսով [www.lin.am](http://www.lin.am)-ով և 24 և 20 տոկոսով՝ [www.news.am](http://www.news.am)-ով և [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)-ով: [www.lin.am](http://www.lin.am)-ում ԼՀԿ-ն երկրորդ ամենաշատ լուսաբանված կուսակցությունն էր, որը չի ստացել որևէ բացասական մեկնաբանություն: [www.news.am](http://www.news.am)-ով և [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)-ով ՀՀԿ-ն երկրորդ ամենաշատ լուսաբանված կուսակցությունն էր և ենթարկվել է զգալի քննադատության: [www.azatutyun.am](http://www.azatutyun.am)-ում, ԼՀԿ-ն և ԲՀԿ-ն լուսաբանվել են նույնքան, որքան ՀՀԿ-ն, սակայն առավել չեզոք տոնայնությամբ:

<sup>79</sup> ԱՎՎ-ի համաձայն՝ ընտրողների ցուցակների ճշգրտության հետ կապված պաշտոնական բողոքներ չեն եղել:

<sup>80</sup> Մի դեպքում վարչական դատարանը ստացել է ՏԸՀ որոշումներից մեկը բողոքարկող դիմում կապված դիտորդի՝ աղյուսակավորման գործընթացին ներկա գտնվելու իրավունքի խախտման հետ: Դատարանը չի քննել դիմումը, քանի որ գտել է, որ այն պետք է սկզբում ներկայացվեր ԿԸՀ: Ավելի ուշ, սակայն, վերաքննիչ դատարանը վճիռ կայացրեց առ այն, որ այդ դիմումը տվյալ դեպքում պետք է քննվեր վարչական դատարանի կողմից:

<sup>81</sup> Վենետիկի հանձնաժողովի 2002թ.-ի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի» Բացատրական զեկույցի 99-րդ պարբերությունը նշում է, որ «Բողոք բերելու իրավունքը [ընտրական] վեճերում պետք է սահմանվի որքան հնարավոր է լայն շրջանակով: Ընտրատարածքի յուրաքանչյուր ընտրողի համար պետք է հնարավոր լինի ... բողոք ներկայացնել»:

Ընտրությունների վերջնական արդյունքները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան միայն ընտրապայքարի մասնակիցների կողմից՝ չնայած ընդունված միջազգային լավ գործելակերպին:<sup>82</sup>

Մինչ բողոքների ներկայացման և լուծման ժամկետներն ընհանուր առմամբ ողջամիտ են, առկա են արդյունքների ամփոփումից առաջ ՏՀՀ-ների և ԿՀՀ-ի կողմից բողոքների քննման ժամկետների մասնակի համընկնումներ:<sup>83</sup> Գործնականում ՏՀՀ-ների մեծ մասը ընտրությունների օրվան հաջորդող բողոքների հետ կապված որոշումներ չի կայացրել նախքան այդպիսի որոշումների բողոքարկման համար սահմանված վերջնաժամկետը: Դա սահմանափակում է դիմումատուների՝ այդ որոշումները ԿՀՀ բողոքարկելու հնարավորությունը, ինչը մտահոգիչ է արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման տեսանկյունից:

*ՏՀՀ-ներին ներկայացվող բողոքների ներկայացման և լուծման, ինչպես նաև ընտրությունների օրվանից հետո ՏՀՀ որոշումների բողոքարկման ժամկետները պետք է փոփոխվեն արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման համար:*

Ընտրությունների օրվանից առաջ միայն մի քանի բողոքներ են ներկայացվել ԿՀՀ և դատարաններ, և ոչ մի բողոք՝ ՏՀՀ-ներ: Վարչական դատարանը ստացել և մերժել է մեկ բողոք ընդդեմ ԱՎՎ մի որոշման, որով մերժվել էր կրկնակի քաղաքացիություն ունեցող հնարավոր թեկնածուին քաղաքացիության մասին տեղեկանքի տրամադրումը: ՔՀԿ-ների կողմից երկու բողոք էր ներկայացվել ԿՀՀ ապօրինի քարոզչության առնչությամբ, որոնցից մեկը բավարարվել էր, իսկ մյուսը՝ մերժվել: ԿՀՀ-ն նաև ստացել էր ապօրինի ընտրական պաստառների հեռացման մի շարք դիմումներ:

Դրական է, որ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 2018թ.-ի փոփոխություններով կուսակցություններին և ՔՀԿ դիտորդներին իրավունք է վերապահվել ընտրական հանցագործությունների հետ կապված հայցադիմում ներկայացնել վարչական դատարան: Միննույն ժամանակ հնարավոր դիմումատուները պետք է դատական ծախսեր վճարեն վարչական վարույթ սկսելու համար: ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցներ կարծիք հայտնեցին, որ այդպիսի իրավական ծախսերը և այդ ծախսերի ոչ միատեսակ կիրառումը կարող են խոչընդոտ հանդիսանալ արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման տեսանկյունից:<sup>84</sup>

<sup>82</sup> 2002թ.-ի Վենետիկի հանձնաժողովի Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագրքի II.3.3.գ մասը սահմանում է, որ «Ընտրատարածքում գրանցված բոլոր թեկնածուներն ու ընտրողները պետք է ունենան բողոքարկման իրավունք: Ընտրողների կողմից ընտրությունների արդյունքների բողոքարկման նկատմամբ կարող է սահմանվել ողջամիտ քվորում»:

<sup>83</sup> Ընտրությունների օրվան կամ հետընտրական ժամանակահատվածի խախտումների վերաբերյալ դիմումը կամ բողոքը ՏՀՀ-ի կամ ԿՀՀ-ի կողմից պետք է ստացվեր դեկտեմբերի 14-ից ոչ ուշ: ՏՀՀ-ները կարող էին վճիռներ կայացնել այդպիսի դիմումների հիման վրա դեկտեմբերի 15-ից ոչ ուշ:

<sup>84</sup> Վարչական դատարանի հայցագինը 4000 ՀՀԴ է, վերաքննիչ դատարանինը՝ 10,000 ՀՀԴ, իսկ վճարելի դատարանինը՝ 20,000 ՀՀԴ: Այս վճարը չի գանձվում, եթե գործն առնչվում է դիմումատուի անհատական իրավունքներին: ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցները պնդում էին, որ որոշ դատավորներ այդ հայցագինը կիրառում են ըստ յուրաքանչյուր պաշտոնական դիմումի, իսկ այլոք՝ ըստ դիմումում արժարժվող յուրաքանչյուր խնդրի:

ԺՀՄԻԳ ԸԴԱ գրուցակիցները որևէ մտահոգություն չեն հայտնել ընտրական վարչարարության մարմիններում, դատարաններում և իրավապահ մարմիններում դիմումների և բողոքների համակարգի մատչելիության վերաբերյալ:

**XIII. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ**

Իրավական դաշտը սահմանում է միջազգային<sup>85</sup> և տեղական քաղաքացիական հասարակության կազմակերպությունների<sup>86</sup> կողմից ընտրությունների դիտարկման հնարավորություն: Այն նաև կուսակցությունների վստահված անձանց և ԶԼՄ ներկայացուցիչներին թույլատրում է ընտրությունների օրը ներկա գտնվել տեղամասային կենտրոններում և ՏԸՀ-ներում: Օրենքը բոլոր հնարավոր դիտորդական կազմակերպություններից պահանջում է դիմել հավատարմագրման համար և ներկայացնել դիտորդների ամբողջական ցուցակ ամենաուշը ընտրություններից 15 օր առաջ: Այս պահանջը խնդիրներ կարող է հարուցել շահագրգիռ խմբերի համար դիտորդների հավաքագրման հարցում:

Չնայած ԺՀՄԻԳ-ի և Վենետիկի հանձնաժողովի նախկին հանձնարարականներին՝ ընտրական օրենսգիրքը քաղաքացիական հասարակության դիտորդական կազմակերպություններից պահանջում է իրենց կանոնադրության մեջ ունենալ ժողովրդավարությանն ու մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող նպատակներ ընտրություններին նախորդող առնվազն մեկ տարվա ընթացքում: Այս պահանջը սահմանափակում է դիտարկման հնարավորությունը:<sup>87</sup> Դրական է, որ 2018թ. մայիսի ընտրական օրենսգրքի փոփոխություններով վերացվեցին տեղամասերում գտնվող հավատարմագրված լրագրողների և լրատվամիջոցների թվի սահմանափակումները:

*Համաձայն նախկին հանձնարարականներից մեկի՝ նորաստեղծ կազմակերպություններին որպես դիտորդ հավատարմագրելու արգելք սահմանող դրույթները պետք է վերանայվեն: Դիտորդների հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարող է սահմանվել ընտրությունների օրվան ավելի մոտ:*

Մինչև նոյեմբերի 24-ի վերջնաժամկետը ԿԸՀ-ն քաղաքացիական հասարակության կազմակերպություններից (ՔՀԿ) ստացել է 25 հավատարմագրման դիմումներ: Այն հավատարմագրել է դրանցից 22-ին՝ ընդհանուր թվով 17.813

<sup>85</sup> Միջազգային կազմակերպություններին դիտարկման հրավեր պետք է ուղարկվի նախագահի, կառավարության կամ ԿԸՀ-ի կողմից՝ հավատարմագրման նպատակով:  
<sup>86</sup> ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվելու համար, ՔՀԿ-ներից պահանջվում է իրենց դիտորդների համար վարքագծի ներքին կանոններ ընդունել և վերապատրաստումներ անցկացնել:  
<sup>87</sup> Օրենքի համաձայն՝ ՔՀ դիտորդական կազմակերպություններից պահանջվում է ներքին վարքագծի կանոններ ընդունել և վերապատրաստել իրենց դիտորդներին ԿԸՀ-ի կողմից հավատարմագրվելու համար:



դիտորդներով:<sup>88</sup> ԿԸՀ-ն նաև հավատարմագրել է ութ միջազգային կազմակերպությունների՝ 509 միջազգային դիտորդներով: Թեև կայացած և փորձառու ՔՀԿ-ների կողմից առկա էր ընտրությունները դիտարկելու իրական ջանք, մի շարք ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ մտահոգություններ հայտնեցին որոշ ՔՀԿ-ների և քաղաքական կուսակցությունների միջև առկա ուղղակի, այդ թվում՝ պայմանագրային կապերի մասին:<sup>89</sup> Որոշ ԺՀՄԻԳ ԸԴԱ զրուցակիցներ նշեցին, որ դա կարող էր լինել դիտավորյալ փորձ<sup>90</sup> քողարկելու ընտրական ծախսերի սահմանված շրջանակից դուրս կատարվող որոշակի միջոցների ծախսը, կամ արժեզրկելու ՔՀԿ դիտորդական առաքելությունները:

ԸՄԴԱ-ն արձանագրել է ՔՀԿ դիտորդների ներկայություն դիտարկված տեղամասային կենտրոնների 52 տոկոսում: Հավատարմագրված ՔՀԿ դիտորդների ընդհանուր թվի հետ համեմատած՝ ԸՄԴԱ կողմից դիտարկված տեղամասային կենտրոններում ներկա ՔՀԿ դիտորդների ցածր թիվը խոսում է որոշ ՔՀԿ-ների կողմից՝ ընտրությունների օրվա ընթացակարգերը դիտարկելու իրական հետաքրքրության կամ մտադրության պակասի մասին:

#### XIV. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ

##### A. ՄԵԿՆԱՐԿ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ընտրությունների օրն անցել է հանգիստ և խաղաղ, առանց նշանակալի միջադեպերի և խախտումների: Ընտրողների նկատմամբ ճնշումների կամ ահաբեկման մասին հաղորդումներ չեն եղել, և ընտրությունների օրվա ընթացակարգերը դրական են գնահատվել ԸՄԴԱ դիտորդների ճնշող մեծամասնության կողմից:

Ընտրական տեղամասերի բացումը դրական է գնահատվել ԸՄԴԱ դիտարկված բոլոր 82 տեղամասերում, և քվեարկությունն սկսվել է ժամանակին: Քվեարկության օրվա մեկնարկի ընթացակարգերն ընդհանուր առմամբ պահպանվել են, և Ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրություններին

<sup>88</sup> ԿԸՀ-ն մերժեց 5,406 դիտորդների ցանկ ներկայացրած «Համահայկական երիտասարդական ասոցիացիա» ՀԿ-ի հավատարմագրումը՝ գրանցման համար օրենքով սահմանված պահանջներին չհամապատասխանելու պատճառաբանությամբ: Բացի այդ, ԿԸՀ-ն գործն ուղարկեց դատախազություն փաստաթղթերի ենթադրյալ կեղծման հիմքով, որի հիման վրա քրեական գործ է հարուցվել: «Իրավագոր» և «Համաչափ զարգացում» ՀԿ-ները՝ համապատասխանաբար 5504 և 5410 դիտորդների ցանկով, հետ վերցրին իրենց հավատագրման դիմումները:

<sup>89</sup> Տես՝ օրինակ Տրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի նոյեմբերի 26-ի [հայտարարությունը](#):

<sup>90</sup> [Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից անկողմնակալ ընտրությունների դիտարկման և մոնիթորինգի համընդհանուր սկզբունքների հռչակագիրը](#) հաստատում է, որ «ընտրական գործընթացների անկախ դիտարկումը ... ներառում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից ընտրությունների անկողմնակալ դիտարկումն ու մոնիթորինգը, ինչը տարբեր է դատական քննումից և քաղաքական կուսակցությունների, թեկնածուների կամ վերջիններիս ներկայացուցիչների կողմից ընտրություններին հետևելու գործընթացից»:

նախապատրաստվել են կոլեգիալ կերպով: Ընտրապայքարի մասնակիցների վստահված անձինք ներկա են եղել դիտարկված 59, իսկ ՔՀԿ դիտորդները՝ 31 տեղամասերում:

Ողջ օրվա ընթացքում ԸՄԴԱ դիտորդները արձանագրել են, որ զգալի թվով տեղամասային կենտրոններ (դիտարկված 975 կենտրոնների 71 տոկոսը) անհասանելի էին տեղաշարժման դժվարություններ ունեցող ընտրողների համար, ինչը կարող էր և ումանց համար քվեարկելու դժվարություններ ստեղծած լինել:<sup>91</sup> Այս խոչընդոտը հակասում է բոլոր ընտրողների համար հավասար ընտրական իրավունքի ապահովման միջազգային պարտավորություններին:<sup>92</sup> ԿԸՀ-ն ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին տեղեկացրեց, որ տեղամասային կենտրոնների տարածքները հիմնականում չէին փոխվել նախորդ ընտրություններից հետո:<sup>93</sup> Տեղամասային կենտրոնների հասանելիության մասին տվյալների պարբերական հավաքագրում չի արվել ուսումնասիրման նպատակներով, ոչ էլ ներկայացվել է հանրությանը:<sup>94</sup> Իշխանությունների կողմից պատշաճ միջոցների ոչ բավարար ձեռնարկումը զգալիորեն խոչընդոտում է հաշմանդամություն ունեցող անձանց լիարժեք մասնակցությանն ընտրական գործընթացին՝ որպես ընտրող և թեկնածու:

*Իշխանությունները պետք է առավել նախաձեռնողական լինեն հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական մասնակցության համար հասանելի միջավայր ապահովելու հարցում և միջոցներ ձեռնարկեն սահմանափակ տեղաշարժման հնարավորություններով անձանց համար քվեարկության մատչելիությունը մեծացնելու համար: Հասանելիության խնդիրներ ունեցող շենքերը պետք է առանձնացվեն նախապես և անհրաժեշտ դեպքերում պետք է տրվեն այլընտրանքային լուծումներ:*

Քվեարկության օրը դրական է գնահատվել ԸՄԴԱ դիտարկումների 99 տոկոս դեպքերում, ինչը նշանակում է, որ ԸԸՀ-ները գործել են համապատասխան ընթացակարգերի համաձայն: Տեղամասային կենտրոններում վստահված անձանց (դիտարկումների 93 տոկոս դեպքերում) և ՔՀԿ դիտորդների (դիտարկումների 52 տոկոս դեպքերում)

<sup>91</sup> Օրենքը նախատեսում է շրջիկ արկղով քվեարկություն հիվանդանոցային հիվանդների համար, որոնց ցուցակները կազմվում են բժշկական հաստատությունների ղեկավարների կողմից ընտրություններից երեք օր առաջ: Շրջիկ արկղով քվեարկություն նախատեսված չէ այլ ընտրողների համար:

<sup>92</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 29(a) հոդվածը պետություններին պարտավորեցնում է «ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք՝ կարողանան լիարժեք և արդյունավետ կերպով մասնակցել քաղաքական և հանրային կյանքին՝ մյուսների հետ հավասար պայմաններով ... ի թիվս այլոց, ապահովելով, որ քվեարկության ընթացակարգերը, տարածքները և նյութերը լինեն պատշաճ, հասանելի, մատչելի և հեշտ ... գործածելի»:

<sup>93</sup> Որոշ դեպքերում ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատել է, որ տեղամասային կենտրոնները տեղակայված են երկրորդ հարկում՝ առանց վերելակի: Միննույն ժամանակ այդպիսի իրավիճակները կարող էին կանխվել քվեարկության համար նույն շենքում մեկ այլ տարածք հատկացնելով:

<sup>94</sup> Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 9-րդ հոդվածը պատվիրում է «պատշաճ միջոցներ ձեռնարկել հաշմանդամություն ունեցող անձանց համար, մյուսների հետ հավասար պայմաններով, ապահովելու ... ֆիզիկական միջավայրի, տեղափոխման, տեղեկատվության և հաղորդակցության (ներառյալ տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաներն ու համակարգերը) և հանրության համար բաց, կամ հանրությանը մատուցվող այլ տարածքների ու ծառայությունների հասանելիություն և՛ քաղաքային, և՛ գյուղական շրջաններում»։ Տե՛ս՝ Կոնվենցիայի կոմիտեի [Հայաստանի մասին զեկույցի ամփոփիչ դիտարկումների](#) (8 մայիսի 2017թ.), CRPD/C/ARM/CO/1 51-րդ և 52-րդ պարբերությունները:

ներկայությունը երաշխավորել է ընտրական գործընթացի թափանցիկությունը: Սակայն սահմանափակ թվով դեպքերում (դիտարկումների 3 տոկոս) վստահված անձինք և դիտորդները միջամտել են գործընթացին: Չարտոնված անձինք, հիմնականում ուստիկաններ (երբ չէին մասնակցում քվեարկությանը), ներկա են եղել դիտարկված տեղամասային կենտրոնների հինգ տոկոսում, սակայն չեն միջամտել քվեարկության ընթացքին: Մի քանի դեպքերում նկատվել է քարոզչական նյութերի առկայություն տեղամասային կենտրոններին շատ մոտ տարածքում:

Քվեարկության ընթացակարգերն ընդհանուր առմամբ պահպանվել են, և ընտրական պարագաները հիմնականում հասանելի էին, սակայն դիտարկված տեղամասային կենտրոնների 10 տոկոսում թեկնածուների ցուցակները հրապարակված չէին: Ընտրողներն ընդհանուր առմամբ, սակայն ոչ միշտ, քվեարկել են գաղտնի: Քվեարկության գաղտնությունը խախտվել է հիմնականում այնպիսի դեպքերում, երբ ընտրողները ցուցակում գրանցվելուց հետո ստիպված էին լինում սպասել որևէ քվեախցիկի ազատվելուն: Դա ենթադրում է, որ կա հերթերի պատշաճ կառավարման, կամ որոշ տեղամասային կենտրոններում ավելի շատ քվեախցիկներ տեղադրելու անհրաժեշտություն:

Այլ անձի փոխարեն քվեարկության հնարավոր դեպքերի դեմ պայքարելու համար բոլոր ընտրողները տեղամասային կենտրոններում նույնականացվել են ընտրողների գրանցում իրականացնող տեխնիկական սարքավորումներով, որոնց մեջ ներբեռնված էր տվյալ ընտրատարածքի ընտրողների ցուցակի էլեկտրոնային տարբերակը:

Ընտրողների անձը հաստատող փաստաթղթերը ստուգվել են՝ պարզելու, թե արդյոք անձը գրանցված է տվյալ տեղամասում և թե արդյոք նա արդեն նշված է ցուցակում որպես արդեն քվեարկած անձ: Ընտրողների մատնահետքերը նույնպես ստուգվել են տեխնիկական սարքավորումներով, որպեսզի հնարավոր լինի ընտրություններից հետո մատնահետքերի խաչաձև ստուգումներ իրականացնել ԱՎԿ-ի բազայում առկա մատնահետքերի հետ, բողոքների առկայության դեպքում: Տեխնիկական սարքավորումներով նույնականացման գործընթացն ըստ ԸՄԴԱ դիտարկումների ընթացել է նախատեսվածի համաձայն, առանց նշանակալի խնդիրների՝ չնայած այդ սարքավորումների տեղադրման, թեստավորման և բաշխման համար իշխանությունների ունեցած սեղմ ժամկետներին:<sup>95</sup>

Ընտրողներն ընդհանուր առմամբ տիրապետում էին քվեարկության ընթացակարգերին՝ առաջին անգամ քվեարկողների և տարեցների շրջանում որոշ բացառություններով: ԸՄԴԱ դիտորդները նկատել էին, որ որոշ տարեցներ խնդիրներ են ունենում՝ պայմանավորված ընթացակարգերի բարդությամբ: ԸՄԴԱ դիտորդները նաև նկատել էին, որ քրեակատարողական հիմնարկներում ընտրողները տեղյակ չէին քվեարկության

<sup>95</sup> Նոյեմբերի 19-ից սկսած ԿԸՀ-ն միջազգային հանրության աջակցությամբ լայնածավալ վերապատրաստումներ է իրականացրել տեխնիկական սարքավորումների մասնագետների համար:

ընթացակարգին, ինչի արդյունքում գրանցվեցին քվեարկության գաղտնիության խախտման դեպքեր:<sup>96</sup>

Կուտակումներ նկատվել են դիտարկված տեղամասային կենտրոնների 11 տոկոսում, իսկ քվեարկության ընթացքը հարթ չի ընթացել դեպքերի 7 տոկոսում, ինչը մասնակիորեն հետևանք էր հերթերի ոչ պատշաճ կառավարման (3 տոկոս) և տեղամասային կենտրոնների տարածքի անհարմարություններին (2 տոկոս): Ընտանիքով քվեարկության դեպքեր նկատվել են տեղամասերի 4 տոկոսում, ինչը մտահոգիչ է:

*Տեղամասային կենտրոններում կուտակումները պետք է վերացվեն, օրինակ՝ առավել հարմար տարածքներ հատկացնելով, լրացուցիչ քվեախցիկներ տեղադրելով և հերթերի պատշաճ կառավարմամբ: ԿԸՀ-ն պետք է խթանի ընտրողների իրազեկման ծրագրերը, ներառյալ ընտանիքով քվեարկության կանխման և քվեարկության գաղտնիության կարևորության վերաբերյալ:*

## B. ՁԱՅՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿ ԵՎ ԱՂՅՈՒՍԱԿԱՎՈՐՈՒՄ

Ձայների հաշվարկը դրական է գնահատվել դիտարկված բոլոր 103 տեղամասային կենտրոններում, բացի երկուսից, ինչը մատնանշում է, որ գործընթացն իրականացվել է առանց ընթացակարգային նշանակալի խախտումների և հանգիստ ու լարվածությունից զերծ մթնոլորտում:

ԸԸՀ-ներն ընդհանուր առմամբ կատարել են նախքան քվեատուփերի բացումը սահմանված բոլոր քայլերը: 15 տեղամասային կենտրոններում ընտրողների ցուցակում առկա ստորագրությունների թիվը չէր համապատասխանում տեխնիկական սարքավորումներով տպված տեղեկանքների թվին (տպվում է քվեարկության համար նույնականացված յուրաքանչյուր ընտրողի համար): ԸՄԴԱ դիտորդները մի շարք տեղամասերում (դիտարկված 32 դեպք) արձանագրել են դեպքեր, երբ քվեաթերթիկն օրենքի համաձայն ճանաչվել էր անվավեր վարկանիշային թեկնածուների քվեների մասով, թեև ընտրողի կամարտահայտությունը հստակ էր, ինչը նշան է, որ կա ընթացակարգերի վերանայման անհրաժեշտություն: Չնայած դիտորդները կարողացել են անարգել հետևել ձայների հաշվարկին, նկատվել են դեպքեր, երբ վարկանիշային թեկնածուների ձայները չեն հաշվվել մեկ առ մեկ (դիտարկված 12 դեպքերում), և երբ կատարվել է տարբեր ցուցակների վարկանիշային թեկնածուների ձայների զուգահեռ հաշվարկ, ինչը նվազեցրել է դիտարկված մի քանի տեղամասային կենտրոններում ձայների հաշվարկի թափանցիկությունը:

Ոստիկանությունը ներկա է եղել ձայների հաշվարկին դիտարկված 7 դեպքերում, սակայն, ինչպես քվեարկության ժամանակ, այն չի միջամտել: Վստահված անձինք ուղղակիորեն մասնակցել են ձայների հաշվարկին դիտարկված տեղամասային կենտրոններից 8-ում:

<sup>96</sup> Ընտրողներն ընտրում էին իրենց նախընտրած քվեաթերթիկը ազատ քվեախցիկի հերթում սպասելիս, և աջակցված քվեարկությունը պատշաճ կազմակերպված չէր: Նման դիտարկումներ արվել են Աբովյանի և Վանաձորի քրեակատարողական հիմնարկներում:

Դիտարկված 11 ԸԸՀ-ները դժվարացել են լրացնել արդյունքների ամփոփման արձանագրությունները՝ հիմնականում պայմանավորված հանձնաժողովի անդամների կողմից՝ ընթացակարգերն ըմբռնելու խնդիրներով: Թեև դիտարկված տեղամասային կենտրոններից երեքում ԸԸՀ անդամները նախապես ստորագրել էին արձանագրությունները, արդյունքների դիտավորյալ կեղծման դեպքեր չեն գրանցվել: Որոշ դեպքերում ԸՄԴԱ դիտորդներին չի տրամադրվել արձանագրության քաղվածք (ութ դեպք)՝ հիմնականում կապված պաշտոնական արձանագրության պատճենի կազմման բարդ ընթացակարգի հետ:

Աղյուսակավորման ընթացակարգերը դիտարկվել են բոլոր 38 ՏԸՀ-ներում և դրական են գնահատվել դրանցից 34-ում: Մինչ գործընթացն ընդհանուր առմամբ լավ է ընթացել, ԸՄԴԱ դիտորդները արձանագրել են ԸԸՀ արձանագրությունների հանձնման-ընդունման կազմակերպման խնդիրներ 5 ՏԸՀ-ներում, և արդյունքների աղյուսակավորման ոչ պատշաճ պայմանների առկայություն 11 ՏԸՀ-ներում՝ հիմնականում պայմանավորված տարածքի սահմանափակությամբ: Որոշ ՏԸՀ-ներում դրա արդյունքում ընտրական փաստաթղթերի հանձնման-ընդունման գործընթացը ստացվեց անկանոն և ոչ թափանցիկ: Հերթում սպասող ԸԸՀ-ների շրջանում լարվածություն նկատվել է 4 ՏԸՀ-ներում: ԸՄԴԱ դիտորդները հաղորդել են աղյուսակավորման գործընթացի որոշ փուլերին սահմանափակ մատչելիության խնդիրների մասին: Թիմերից մեկին թույլ չէին տվել դիտարկել ԸԸՀ արձանագրությունների տվյալների մուտքագրումը:<sup>97</sup>

ԸՄԴԱ դիտորդներն ականատես են եղել մի քանի դեպքերի, երբ ԸԸՀ-ները արձանագրություններ են լրացրել կամ ուղղել նախքան դրանք ՏԸՀ-ներին հանձնելը, սակայն արդյունքների դիտավորյալ կեղծման նշաններ չեն եղել: ԸՄԴԱ դիտորդները բոլոր ՏԸՀ-ներում նկատել են, որ ԸԸՀ արդյունքների ամփոփման արձանագրություններում առկա էին անկարևոր, բայց մեծաթիվ թվաբանական սխալներ, որոնք ենթակա էին ուղղման: Աղյուսակավորման ընթացքում ՏԸՀ որոշ անդամներ հաստատման ընթացակարգերը կիրառել են ոչ հետևողական և միատեսակ կերպով: Ընտրություններից հետո հրապարակված ԸԸՀ արձանագրությունների ստուգումը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից ցույց տվեց, որ դրանցում նշանակալի թվով փոփոխություններն են կատարվել առանց համապատասխան ԸԸՀ նախագահի կամ քարտուղարի կողմից վավերացվելու (ստորագրվելու), ինչպես պահանջվում է օրենքով:<sup>98</sup> Բացի այդ, ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն նկատեց, որ արդյունքների թվերում կատարվել էին մանր ուղղումներ օրենքին հակասող կարգով: Սա մտահոգությունների տեղիք է տալիս ընթացակարգերին խստորեն հետևելու անբավարարության տեսանկյունից, ինչը ապահովում է ընտրությունների արդյունքների ճշգրտությունն ու ամբողջականությունը:

*ԿԸՀ-ն պետք է ընդլայնի ԸԸՀ վերապատրաստումներն արդյունքների ամփոփման արձանագրությունների մասով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ձայների հաշվարկին և այդ արձանագրությունների լրացման կարգին: Ընտրությունների արդյունքների*

<sup>97</sup> Ընտրական օրենսգիրքը դիտորդներին իրավունք է վերապահում ներկա լինել ՏԸՀ նիստերին և մուտք ունենալ բոլոր փաստաթղթերին:

<sup>98</sup> ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն ստուգել է ԸԸՀ 66 արձանագրությունների քաղվածքներ և հայտնաբերել, որ դրանցից 23-ում առկա էին տարբեր տիպի վրիպակներ, որոնք ուղղվել էին նախքան ԿԸՀ կայքէջում հրապարակվելը:

*Ճշգրտության և ամբողջականության ապահովման նպատակով աղյուսակավորման փուլում արդյունքների ամփոփման արձանագրություններում արվող բոլոր ուղղումները պետք է լինեն միատեսակ, հաշվետվողական և արվեն օրենքի համաձայն:*

## XV. ՀԵՏԸՆՏՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ

Ըստ ԿԸՀ-ի՝ ՔՀԿ դիտորդները ՏԸՀ-ներին 26 բողոք են ներկայացրել քվեարկության օրվա տարբեր ընթացակարգային խախտումների վերաբերյալ, ինչպես օրինակ նույն կուսակցության / դաշինքի երկուսից ավելի վստահված անձանց ներկայությունը տեղամասային կենտրոնում, կամ ԸԸՀ-ի կողմից բողոքները գրանցամատյանում չգրանցելը:<sup>99</sup> Այդ բողոքներից վեցի արդյունքում ԸԸՀ անդամների որոկավորման վկայականները չեղարկվեցին: Ընտրական գաղտնի փաստաթղթերի ոչ պատշաճ փաթեթավորման մեկ դեպք ՏԸՀ-ի կողմից ուղարկվեց վարչական դատարան: ԺՀՄԻԳ ԸԴԱ որոշ գրուցակիցների կողմից մտահոգություններ են հնչել ՏԸՀ-ների՝ բողոքների արհեստավարժ քննման փորձագիտական կարողությունների վերաբերյալ:<sup>100</sup>

Օրենքը նախատեսում է, որ ձայների հաշվարկի ժամանակ տեղամասային կենտրոնում ներկա գտնված վստահված անձինք և թեկնածուները կարող են պահանջել ձայների վերահաշվարկ՝ առանց հիմնավորումների: Ընտրությունների օրվանից հետո 8 ՏԸՀ-ների կողմից ստացվել է ընդհանուր թվով 13 վերահաշվարկի դիմում:<sup>101</sup> Դիմումներից երկուսը բավարարվել է, մինչ մյուսները մերժվել են ֆորմալ հիմքերով:<sup>102</sup> Այնուհանդերձ, այդ և մի շարք այլ ՏԸՀ-ներ ԸԸՀ արձանագրություններն ուսումնասիրելուց հետո սեփական նախաձեռնությամբ իրականացրել են նշված տեղամասային կենտրոններում ձայների վերահաշվարկ:<sup>103</sup> Իրականացվել է ընդհանուր թվով 57 վերահաշվարկ, որի արդյունքում ընտրությունների արդյունքներում կատարվել են մանր ուղղումներ, որոնք որևէ ազդեցություն չեն ունեցել մանդատների բաշխման վրա:<sup>104</sup>

Քվեարկության օրվանից հետո ԿԸՀ-ն ստացել է ընդհանուր թվով 16 դիմումներ և բողոքներ՝ վերջինները հիմնականում ներկայացված ՔՀԿ դիտորդների կողմից՝ կապված

<sup>99</sup> Թեկնածուներն ու վստահված անձինք որևէ բողոք չեն ներկայացրել ընտրությունների օրը տեղի ունեցած խախտումների վերաբերյալ:

<sup>100</sup> Ըստ ԿԸՀ-ի՝ ՏԸՀ-ները դիմում-բողոքների քննման ժամանակ միշտ չէ, որ վստահ են եղել իրենց գործողություններում և որոշումների մեծ մասը կայացրել են ԿԸՀ-ի իրավական վարչության հետ ակտիվ խորհրդակցությամբ:

<sup>101</sup> Ձայների վերահաշվարկներ են պահանջվել թիվ 8, 9, 16, 21, 23, 34, 35, 38 ՏԸՀ-ներում ԼՀԿ-ի, ԲՀԿ-ի և ՀՅԴ-ի կողմից:

<sup>102</sup> Տասը դիմումներ ներկայացվել էին թեկնածուների կողմից, որոնք ներկա չէին եղել համապատասխան տեղամասային կենտրոններում ձայների հաշվարկի ժամանակ, իսկ մեկը ներկայացվել էր վերջնաժամկետից հետո:

<sup>103</sup> Ներառյալ թիվ 1, 10, 14, 15, 25, 37 ՏԸՀ-ները:

<sup>104</sup> 34 վերահաշվարկների արդյունքում քվեարկության արդյունքների փոփոխություններ չեն եղել: Աննշան փոփոխություններ են կատարվել 23 ԸԸՀ արձանագրություններում: Արմավիրի մարզում գրանցվել էր մեկ դեպք, երբ 44 քվեներ տրվել էին սխալ թեկնածուի: Այդ դեպքը ՏԸՀ-ի կողմից ուղարկվել էր դատախազություն հետաքննության համար:

քվեարկության օրվա խախտումներին առնչվող ՏՀՀ որոշումների հետ:<sup>105</sup> ԿՀՀ-ն որոշումներ կայացրել է միայն չորս բողոքների մասով նախքան վերջնական արդյունքների հրապարակումը՝ մերժելով մյուս բողոքները այն հիմքով, որ դրանք ներկայացվել էին դեկտեմբերի 14-ի վերջնաժամկետից հետո: ԿՀՀ-ն նաև կիրառել է նեղ իրավական մեկնաբանություն՝ պատճառաբանելով, որ բողոք բերելու իրավունք ունեն միայն անհատ դիտորդները և ոչ նրանց առաջադրած ՔՀԿ-ները:

ԿՀՀ-ն քվեարկության օրը վարել է ստացված ահազանգերի և պաշտոնական դիմում-բողոքների, ինչպես նաև ձեռնարկված գործողությունների վերաբերյալ էլեկտրոնային հանրային ռեգիստր, ինչը շատ ողջունելի է:<sup>106</sup>

Քվարկության օրվանից հետո վարչական դատարանը ՔՀԿ դիտորդների կողմից ստացել է ենթադրյալ ընտրախախտումների վերաբերյալ վեց դիմում, հիմնականում կապված ԸՀՀ-ների՝ ողջ պահանջվող տեղեկատվությունը գրանցամատյաններում չգրանցելու հետ, սակայն գործերի քննությունն ու լուծումը տեղի է ունեցել ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության հեռանալուց հետո:<sup>107</sup>

*Ձանքեր պետք է ձեռնարկվեն ընտրական վեճերի լուծման ոլորտում ընտրական վարչարարության մարմինների և դատարանների փորձագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ: Վեճերի լուծման գործընթացի թափանցիկության և դրա վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարձրացման նպատակով ԿՀՀ-ն կարող է դիտարկել ողջ ընտրական գործընթացի ընթացքում ստացված և քննված դիմումների և բողոքների մշտական հանրային ռեգիստր վարելու հնարավորությունը:*

Դեկտեմբերի 14-ին դատախազությունը հայտարարեց վեց քրեական գործի հարուցման մասին այլ անձի փոխարեն քվեարկելու, ընտրակաշառքի և ընտրողների ու վստահված անձանց վրա ճնշումներ գործադրելու փաստերի առնչությամբ:<sup>108</sup> Ի լրումն դրա, դատախազությունը տարբեր շահառուներից, այդ թվում՝ ընտրողներից և լրատվամիջոցներից, ստացել էր 442 հաղորդումներ քվեարկության օրը, ինչպես նաև դրան նախորդող և հաջորդող ժամանակահատվածներում տեղի ունեցած խախտումների վերաբերյալ:<sup>109</sup>

Ընտրությունների վերջնական արդյունքները, այդ թվում՝ Ազգային ժողովում մանդատների բաշխումը, ԿՀՀ-ի կողմից հրապարակվել են դեկտեմբերի 16-ին:

<sup>105</sup> Մեկը չէր դիտարկվել, քանի որ ներկայացվել էր վերահաշվարկի համար դիմելու վերջնաժամկետից հետո, մեկը բավարարվել էր, իսկ մյուսները մերժվել էին: Հետագայում ևս չորս դիմում ներկայացվել էր վարչական դատարան:

<sup>106</sup> Վարչական դատարանն ունի ընտրություններին առնչվող վճիռների մշտական առցանց տվյալների բազա:

<sup>107</sup> Արտահերթ ընտրությունների յուրահատուկ ժամկետները կիրառելի չեն այդպիսի բողոքների նկատմամբ, և դրանք քննվում են վարչական դատավարության սովորական ժամկետների համաձայն:

<sup>108</sup> Տե՛ս՝ Դատախազության [հայտարարությունը](#) (միայն հայերեն):

<sup>109</sup> Ի թիվս այլոց, դատախազությունը հետաքննում էր այլ անձի փոխարեն հնարավոր քվեարկության 113 դեպք, ընտրողի կամքի վրա ներգործելու 14 դեպք, հնարավոր ընտրակաշառքի 11 դեպք, քվեարկության գաղտնիության խախտման 9 դեպք, ընտրությունների արդյունքների կեղծման 3 դեպք, և քարոզչություն կատարելուն հարկադրելու 2 դեպք:

Քվեարկության արդյունքների համաձայն՝ հաղթանակած դաշինքը ստանում էր պատգամավորական մանդատների երկու երրորդից ավելին: Օրենքով սահմանված կարգով խորհրդարան անցած մյուս երկու կուսակցություններին տրամադրվեցին լրացուցիչ մանդատներ միասնաբար մեկ երրորդի փոքրամասնություն կազմելու համար: Նոր Ազգային ժողովի առաջին նիստը գումարվեց 2019թ.-ի հունվարի 14-ին՝ 132 պատգամավորներով, որից 32-ը՝ կին: Ընտրապայքարի մասնակիցներից որևէ մեկն ընտրությունների արդյունքները չի բողոքարկել սահմանադրական դատարան: Դրական է, որ ընտրապայքարի մասնակիցների մեծ մասը հրապարակայնորեն շնորհավորեցին հաղթողներին:<sup>110</sup>

## XVI. ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

Սույն փաստաթղթի ողջ տեքստում ներառված հանձնարարականները տրվում են Հայաստանի Հանրապետությունում ընտրությունների անցկացման հետագա բարելավման և դրանք ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորությունների, ինչպես նաև ժողովրդավարական ընտրությունների այլ միջազգային պարտավորությունների ու չափանիշների հետ լիարժեք ներդաշնակեցմանն ուղղված ջանքերին աջակցելու նպատակով: Սույն հանձնարարականները պետք է ընթերցվեն նախկին՝ դեռևս չկատարված ԺՀՄԻԳ հանձնարարականների հետ միասին<sup>111</sup>: ԺՀՄԻԳ-ը պատրաստակամություն է հայտնում աջակցել ՀՀ իշխանություններին ընտրական գործընթացների հետագա բարելավման և սույն, ինչպես նաև նախկին զեկույցներում ներառված հանձնարարականների կատարման հարցում:

### A. ԱՌԱՋԱՆԵՐԹ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ

1. Իշխանությունները, կուսակցությունները, լրատվամիջոցները, քաղաքացիական հասարակությունը և քաղաքացիները պետք է շարունակեն ընտրական

<sup>110</sup> Իր [հետքնտրական հայտարարությունում](#) ՀՀԿ-ն հաջողություն մաղթեց նորաստեղծ Ազգային ժողովին և նոր կառավարությանը, սակայն նշեց, որ «ընտրությունները ժողովրդավարական էին իրենց ձևով, բայց ոչ բովանդակությամբ»: ՀՅԴ-ն [իր հայտարարությունում](#) եզրակացրել էր, որ «ժողովուրդը քվեարկել էր անձի և ոչ գաղափարախոսության օգտին»:

<sup>111</sup> Համաձայն [1999թ. ԵԱՀԿ Ստամբուլի փաստաթղթի](#) 25-րդ պարբերության՝ ԵԱՀԿ մասնակից պետությունները պարտավորվել են «արագ արձագանքել ԺՀՄԻԳ-ի ընտրական հարցերում գնահատականներին ու հանձնարարականներին»: Նախկին հանձնարարականների կատարումը ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից գնահատվում է հետևյալ կերպ. [2012թ. Խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցի](#) (2012թ. Վերջնական զեկույց) թիվ 1, 3, 6, 10, 11, 17 և 23 հանձնարարականները, [2013թ. Նախագահական ընտրությունների վերջնական զեկույցի](#) (2013թ. Վերջնական զեկույց) թիվ 1, 2, 3, 5, 7, 10, 11, 14, 22, 23 և 24 հանձնարարականները, ինչպես նաև [2017թ. Խորհրդարանական ընտրությունների վերջնական զեկույցի](#) (2017թ. Վերջնական զեկույց) թիվ 1, 3, 17 և 23 հանձնարարականներն ամբողջությամբ կատարված են: 2012թ. Վերջնական զեկույցի թիվ 2, 4, 5, 8, 12, 14, 18, 20 և 25 հանձնարարականները, 2013թ. Վերջնական զեկույցի թիվ 4, 6, 8, 17, 20, 21 և 26 հանձնարարականները, ինչպես նաև 2017թ. Վերջնական զեկույցի թիվ 2, 6, 20 և 21 հանձնարարականները հիմնականում կատարված են: 2012թ. Վերջնական զեկույցի թիվ 4, 7, 9, 15, 18, 19 և 22 հանձնարարականները, 2013թ. Վերջնական զեկույցի թիվ 9, 18, 25 և 27 հանձնարարականները, ինչպես նաև 2017թ. Վերջնական զեկույցի թիվ 2, 9, 11, 12 և 25 հանձնարարականները կատարված են մասամբ: Տե՛ս նաև [www.paragraph25.odhr.pl](http://www.paragraph25.odhr.pl).



գործընթացի արդարության նկատմամբ վստահությունը պահպանելուն ուղղված ջանքերը՝ ընտրակեղծիքների բոլոր ձևերն արմատախիլ անելու և մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները խթանելու միջոցով:

2. ԺՀՄԻԳ-ի սույն և նախկին զեկույցներում մատնանշված բացերի և երկիմաստությունների վերացման համար իրավական դաշտը պետք է վերանայվի հաջորդ ընտրություններից բավականաչափ ժամանակ առաջ՝ ներառական օրենսդրական գործընթացի միջոցով:
3. Իշխանությունները պետք է նախաձեռնեն միջոցների իրավական վերանայում՝ երաշխավորելու ընտրողների անձնական տվյալների պաշտպանությունը՝ մինևույն ժամանակ ընտրական շահառուների համար պատշաճ հասանելիություն պահպանելով ընտրացուցակներին:
4. Իշխանությունները պետք է շարունակեն նպաստել հանրային լրատվամիջոցների խմբագրական անկախությանը և խթանեն քաղաքացիների համար անկողմնակալ, քննադատական և վերլուծական քաղաքական տեղեկատվության և ծրագրերի հասանելիությունը՝ այդ թվում այն դեպքերում, երբ լուսաբանվում է պետական պաշտոնյաների գործունեությունը: Ի հավելումն դրա, կարող է դիտարկվել հանրային լրատվամիջոցների ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունը:
5. Ընտրական գործընթացի բոլոր շահառուների շրջանում պետք է իրականացվի իրազեկության բարձրացում քաղաքական և հանրային կյանքում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության կարևորության վերաբերյալ՝ հատուկ շեշտադրելով քաղաքական կուսակցություններում կանանց դերակատարությունը: Պետք է դիտարկել կին թեկնածուների առաջնորդման հատուկ միջոցների խթանումը: Դա կարող է արվել թերներկայացված սեռի թեկնածուներին համապետական ցուցակների յուրաքանչյուր երկրորդ դիրքում ընդգրկելու միջոցով:
6. ԿԸՀ-ն պետք է ընդլայնի ԸԸՀ վերապատրաստումներն արդյունքների ամփոփման արձանագրությունների մասով՝ հատուկ ուշադրություն դարձնելով ձայների հաշվարկին և այդ արձանագրությունների լրացման կարգին: Ընտրությունների արդյունքների ճշգրտության և ամբողջականության ապահովման նպատակով աղյուսակավորման փուլում արդյունքների ամփոփման արձանագրություններում արվող բոլոր ուղղումները պետք է լինեն միատեսակ, հաշվետվողական և արվեն օրենքի համաձայն:
7. Ինչպես նշված էր ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկում, իրավական դաշտը պետք է բարեփոխվի՝ սահմանելով քարոզարշավային բոլոր մուծումների ու ծախսերի մասին հաշվետվության ներկայացման պահանջ՝ ներառելով կազմակերպչական և մինչև պաշտոնական քարոզարշավի մեկնարկը կատարված ծախսերը:

## **B. ԱՅԼ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ**

### **Իրավական դաշտ**

8. Իշխանությունները պետք է առավել նախաձեռնողական լինեն հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական մասնակցության համար հասանելի միջավայր ապահովելու հարցում և միջոցներ ձեռնարկեն սահմանափակ տեղաշարժման հնարավորություններով անձանց համար քվեարկության մատչելիությունը մեծացնելու համար: Հասանելիության խնդիրներ ունեցող շենքերը պետք է առանձնացվեն նախապես և անհրաժեշտ դեպքերում պետք է տրվեն այլընտրանքային լուծումներ:
9. Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտրական իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

### **Ընտրական վարչարարություն**

10. Ընտրական վարչարարության աշխատանքի թափանցիկության բարձրացման համար ԿԸՀ-ն պետք է իր կայքէջում պարբերաբար և ժամանակին հրապարակի ԿԸՀ-ի և ՏԸՀ-ների բոլոր որոշումները:
11. Տեղամասային կենտրոններում կուտակումները պետք է վերացվեն, օրինակ՝ առավել հարմար տարածքներ հատկացնելով, լրացուցիչ քվեախցիկներ տեղադրելով և հերթերի պատշաճ կառավարմամբ: ԿԸՀ-ն պետք է խթանի ընտրողների իրազեկման ծրագրերը, ներառյալ ընտանիքով քվեարկության կանխման և քվեարկության գաղտնիության կարևորության վերաբերյալ:

### **Թեկնածուների գրանցում**

12. Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձանց առաջադրման իրավունքի սահմանափակումները պետք է վերացվեն:

### **Քարոզարշավ**

13. Իշխանությունները պետք է կազմակերպեն ընտրողների ուսուցման արշավներ՝ խթանելու ՁԼՄ գրագիտությունը, պատասխանատվությունն ու սոցիալական ներառումը: Սաղրիչ և վիրավորական լեզուն բացառելու համար ընտրապայքարի մասնակիցները կարող են մշակել և կիրառել վարքագծի կանոններ և ինքնուրույն ձևավորել լավ գործելակերպ:

**Քարոզարշավի ֆինանսավորում**

14. Օրենսդիրն ու ԿԸՀ-ն պետք է հստակ սահմանեն ՎՎԾ-ի՝ ֆինանսական վերահսկման մանդատը և վերջինիս տրամադրեն անհրաժեշտ միջոցներ և մարդկային ռեսուրսներ՝ ապահովելու, որ ՎՎԾ-ն իրականացնի քարոզարշավի ֆինանսավորման պատշաճ վերահսկողություն:

**Չանգվածային լրատվության միջոցներ**

15. Միջոցներ պետք է ձեռնարկվեն լրատվամիջոցների սեփականության լիարժեք թափանցիկության ապահովման ուղղությամբ՝ սահմանելով վերջնական սեփականատերերի հստակ բացահայտման պահանջ: Լրատվամիջոցների սեփականատերերի և ֆինանսավորման աղբյուրների մասին ամբողջ տեղեկատվությունը պետք է հրապարակվի:
16. Կարելի է դիտարկել ՀՌՀ-ի՝ քաղաքական լուսաբանման ամբողջական և անկախ մոնիթորինգ իրականացնելու կարողությունների զարգացման հնարավորությունը, այդ թվում՝ ընտրությունների միջև ընկած ժամանակահատվածում: Ինչպես նշված է ԺՀՄԻԳ-ի նախկին հանձնարարականներից մեկում, կարելի է նաև դիտարկել մեթոդոլոգիայի զարգացման հնարավորությունը՝ թույլ տալու ամենօրյա որակական և քանակական մշտադիտարկում՝ ներառյալ լուսաբանման տոնայնությունը:
17. Իշխանությունները կարող են դիտարկել հանրային հեռարձակողների համար նախընտրական քարոզարշավի ընթացքում բանավեճեր կազմակերպելու պարտավորության սահմանում:

**Դիմումներ և բողոքներ**

18. ՏԸՀ-ներին ներկայացվող բողոքների ներկայացման և լուծման, ինչպես նաև ընտրությունների օրվանից հետո ՏԸՀ որոշումների բողոքարկման ժամկետները պետք է փոփոխվեն արդյունավետ իրավական պաշտպանության միջոցի ապահովման համար:
19. Չանքեր պետք է ձեռնարկվեն ընտրական վեճերի լուծման ոլորտում ընտրական վարչարարության մարմինների և դատարանների փորձագիտական կարողությունների բարձրացման ուղղությամբ: Վեճերի լուծման գործընթացի թափանցիկության և դրա վերաբերյալ տեղեկատվության մատչելիության բարձրացման նպատակով ԿԸՀ-ն կարող է դիտարկել ողջ ընտրական գործընթացի ընթացքում ստացված և քննված դիմումների և բողոքների մշտական հանրային ռեգիստր վարելու հնարավորությունը:

### Ընտրությունների դիտարկում

20. Համաձայն նախկին հանձնարարականներից մեկի՝ նորաստեղծ կազմակերպություններին որպես դիտորդ հավատարմագրելու արգելք սահմանող դրույթները պետք է վերանայվեն: Դիտորդների հավատարմագրման համար դիմելու վերջնաժամկետը կարող է սահմանվել ընտրությունների օրվան ավելի մոտ:

**ՀԱՎԵԼՎԱԾ 1՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ<sup>112</sup>**

Քաղաքական կուսակցություն / դաշինք	Ստացած քվեների թիվը	Ստացած քվեների տոկոսային արտահայտությունը	Հիմնական մանդատներ	Լրացուցիչ մանդատներ	Մանդատների ընդհանուր թիվ	Մանդատների տոկոսային արտահայտությունը
Հայաստանի Հանրապետական կուսակցություն	59,083	4.7				
«Քաղաքացու որոշում» սոցիալ-դեմոկրատական կուսակցություն	8,514	0.7				
«Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցություն	48,816	3.9				
«Իմ քայլը» դաշինք	884,864	70.4	88		88	66.7
«Լուսավոր Հայաստան» կուսակցություն	80,047	6.4	7	11	18	13.6
«Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ» կուսակցություն	6,458	0.5				
«Ազգային առաջընթաց» կուսակցություն	4,121	0.3				
«Մենք» դաշինք	25,176	2.0				
«Օրինաց երկիր» կուսակցություն	12,393	1.0				
«Սասնա ծռեր» համահայկական կուսակցություն	22,868	1.8				
«Բարգավաճ Հայաստան» կուսակցություն	103,801	8.3	10	16	26	19.7
<b>Ընդամենը</b>	<b>1,256,141</b>	<b>100.0</b>	<b>105</b>	<b>27</b>	<b>132</b>	<b>100.0</b>

Գրանցված ընտրողների ընդհանուր թիվը՝ 2,591,276  
 Քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը՝ 1,261,105(48.66 տոկոս)

Անվավեր քվեաթերթիկների թիվը (ընտրացուցակների համար)<sup>113</sup> 4,706  
 Շրջիկ արկղով քվեարկած ընտրողների թիվը՝ 1,209  
 Էլեկտրոնային եղանակով քվեարկած ընտրողների թիվը՝ 504

<sup>112</sup> Աղբյուր՝ [ԿՀՀ կայքէջ](#)

<sup>113</sup> Տարածքային թեկնածուների անվավեր ճանաչված քվեները չեն նշվում ԸՀՀ արձանագրություններում

**ՀԱՎԵԼՎԱԾ 2՝ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՑԱՆԿ**

**ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով**

Peter Osuský	Հատուկ համակարգող	Սլովակիա
Nahima Lanjri	Պատվիրակության ղեկավար	Բելգիա
Maximilian Unterrainer	խորհրդարանական	Ավստրիա
Desislava Atanasova	խորհրդարանական	Բուլղարիա
Piet De Bruyn	խորհրդարանական	Բելգիա
Vincent Van Quickenborne	խորհրդարանական	Բելգիա
Jan Bauer	խորհրդարանական	Չեխիա
Karla Marikova	խորհրդարանական	Չեխիա
Zdenek Ondracek	խորհրդարանական	Չեխիա
Pavel Plzak	խորհրդարանական	Չեխիա
Mika Raatikainen	խորհրդարանական	Ֆինլանդիա
Aude Bono-Vandorme	խորհրդարանական	Ֆրանսիա
Francois Jolivet	խորհրդարանական	Ֆրանսիա
Sereine Mauborgne	խորհրդարանական	Ֆրանսիա
Theodora Chachlaki	խորհրդարանական	Հունաստան
Paul Viktor Podolay	խորհրդարանական	Գերմանիա
Anastasia Gkara	խորհրդարանական	Հունաստան
Georgios Varemenos	խորհրդարանական	Հունաստան
Mauro Del Barba	խորհրդարանական	Իտալիա
Gianluca Castaldi	խորհրդարանական	Իտալիա
Paola Taverna	խորհրդարանական	Իտալիա
Vito Vattuone	խորհրդարանական	Իտալիա
Murat Temirzhanov	խորհրդարանական	Ղազախստան
Susana Amador	խորհրդարանական	Պորտուգալիա
Miguel Santos	խորհրդարանական	Պորտուգալիա
Costel Neculai Dunava	խորհրդարանական	Ռումինիա
Danut Pale	խորհրդարանական	Ռումինիա
Igor Chernyshenko	խորհրդարանական	Ռուսաստանի Դաշնություն
Aleksei Kornienko	խորհրդարանական	Ռուսաստանի Դաշնություն
Gennadii Onishchenko	խորհրդարանական	Ռուսաստանի Դաշնություն
Charlotta Olsson	խորհրդարանական	Շվեդիա
Edward Riedl	խորհրդարանական	Շվեդիա
Sven-Olof Sallstrom	խորհրդարանական	Շվեդիա
Jennifer Hilton	խորհրդարանական	Միացյալ Թագավորություն
Stacy Hope	Հելսինկյան կոմիտե	ԱՄՆ
Everett Price	Հելսինկյան կոմիտե	ԱՄՆ
Roeland Jansoone	Պատվիրակության աշխատակազմի անդամ	Բելգիա
Silvia Andrisova	Պատվիրակության աշխ.	Չեխիա
Anne-Cecile Blauwblomme Delcroix	Պատվիրակության աշխ.	Ֆրանսիա
Sergey Karseka	Պատվիրակության աշխ.	Ռուսաստանի Դաշնություն
Maria Zholobova	Պատվիրակության աշխ.	Ռուսաստանի Դաշնություն
Arturo Biglia	ԵԱՀԿ ԽՎ քարտուղարություն	Բելգիա
Andreas Baker	ԵԱՀԿ ԽՎ քարտ.	Դանիա
Tim Knoblau	ԵԱՀԿ ԽՎ քարտ.	Գերմանիա
Semyon Dzakhaev	ԵԱՀԿ ԽՎ քարտ.	Ռուսաստանի Դաշնություն
Iryna Sabashuk	ԵԱՀԿ ԽՎ քարտ.	Ուկրաինա

**Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողով**

Aleksander Pocij	Պատվիրակության ղեկավար	Լեհաստան
Alberto Ribolla	խորհրդարանական	Իտալիա
Adriana Diana Tuşa	խորհրդարանական	Ռումինիա
Andrej Šircelj	խորհրդարանական	Սլովենիա
José Montilla	խորհրդարանական	Իսպանիա
Soraya Rodríguez Ramos	խորհրդարանական	Իսպանիա
Andrii Lopushanskyi	խորհրդարանական	Ուկրաինա
Yuliya Lovochkina	խորհրդարանական	Ուկրաինա
Katharina Pabel	Վենետիկի հանձնաժողով	Ավստրիա
Michael Janssen	Վենետիկի հանձնաժողով	Գերմանիա
Daniele Gastl	ԵՄԽՎ քարտուղարություն	Ֆրանսիա
Bogdan Torcătoriu	ԵՄԽՎ քարտուղարություն	Ռումինիա

**Եվրոպական խորհրդարան**

Heidi Hautala	Պատվիրակության ղեկավար	Ֆինլանդիա
Rebecca Harms	խորհրդարանական	Գերմանիա
Joachim Zeller	խորհրդարանական	Գերմանիա
Julia Pitera	խորհրդարանական	Լեհաստան
Jose Ignacio Faria	խորհրդարանական	Պորտուգալիա
Clare Moody	խորհրդարանական	Միացյալ Թագավորություն
Robert Golanski	Պատվիրակության աշխատակազմի անդամ	Լեհաստան
Alain Crespinet	ԵՄ քարտուղարություն	Բելգիա
Viviane Chao	ԵՄ քարտուղարություն	Բելգիա
Julien Crampes	ԵՄ քարտուղարություն	Ֆրանսիա

**ԺՀՄԻԳ ԸՂԱ կարճաժամկետ դիտորդներ**

Gabriele Juen	Ավստրիա
Hans Lampalzer	Ավստրիա
Gleb Khmelyov	Բելառուս
Aliaksandr Shpakouski	Բելառուս
Lyudmil Iliev	Բուլղարիա
Carmen Grlica	Խորվաթիա
Bo Flindt	Դանիա
Peder Larsen	Դանիա
Ingrid Poulsen	Դանիա
Suzanne Lassen	Դանիա
Anja Siljak	Դանիա
Stig Skovbo	Դանիա
Line Urban	Դանիա
Kadri Lepp	Էստոնիա
Max Hatvala	Ֆինլանդիա
Julien Arnoult	Ֆրանսիա
Marie-Florence Bennes	Ֆրանսիա
Peggy Corlin	Ֆրանսիա
Melissa Diagne	Ֆրանսիա
Catherine Greze	Ֆրանսիա
Catherine Iffly	Ֆրանսիա
Stéphanie Koltchanov	Ֆրանսիա
Roman Kwiatkowski	Ֆրանսիա

Laurent Lemarchand	Ֆրանսիա
Mathieu Lemoine	Ֆրանսիա
Alexandra Lepeltier	Ֆրանսիա
Claire Lummaux	Ֆրանսիա
Salim Mejahdi	Ֆրանսիա
Antoine Meyer	Ֆրանսիա
Clément Mondamert-Chartron	Ֆրանսիա
Sabrina Rouigui	Ֆրանսիա
Paul Ruotte	Ֆրանսիա
Nicolas Teindas	Ֆրանսիա
Daniel Zeldine	Ֆրանսիա
Judith Abdel-Massih-Thiemann	Գերմանիա
Franziska Best	Գերմանիա
Katharina Franziska Braig	Գերմանիա
Andreas Dr. Dietz	Գերմանիա
Zuzana Dudek	Գերմանիա
Stefanie Dufaux	Գերմանիա
Heiko Gothe	Գերմանիա
Uwe Hellner	Գերմանիա
Johannes Hoerber	Գերմանիա
Siegfried Holzapfel	Գերմանիա
Simon Ilse	Գերմանիա
Helmut Klawonn	Գերմանիա
Christoph Laug	Գերմանիա
Janina Markewitsch	Գերմանիա
Maik Martin	Գերմանիա
Cosima Peissker-Meyer	Գերմանիա
Brigitte Pilibosian	Գերմանիա
Elenor Richter Lyonette	Գերմանիա
Marlien Schlaphoff	Գերմանիա
Marlene Sieck	Գերմանիա
Benjamin Smale	Գերմանիա
Michael Wahlen	Գերմանիա
Anja Witte	Գերմանիա
Martin Wolff	Գերմանիա
Ragnhildur Arnórsdóttir	Իսլանդիա
Albert Jónsson	Իսլանդիա
Gerard Buckley	Իռլանդիա
Deirdre Grogan	Իռլանդիա
Seamus Martin	Իռլանդիա
Elizabeth Mullan	Իռլանդիա
Edward Naessens	Իռլանդիա
Andrea Benedini	Իտալիա
Deborah Bruschi	Իտալիա
Giovanni Capellino	Իտալիա
Silvia Longatti	Իտալիա
Serena Sartini	Իտալիա
Giulio Savina	Իտալիա
Fumiaki Inagaki	Ճապոնիա
Tadahiro Kitamura	Ճապոնիա
Terue Okada	Ճապոնիա
Aigerim Fazylova	Ղազախստան
Guntis Lapsa	Լատվիա
Jomantas Pabiržis	Լիտվա
Aurelijus Sabonis	Լիտվա
Valdas Steponavičius	Լիտվա



Dovile Vaisvilaite	Լիտվա
Ludovico Alcorta	Նիդերլանդներ
Gerda Dane	Նիդերլանդներ
Eduard De Bouter	Նիդերլանդներ
Maria Vrijens	Նիդերլանդներ
Hanna Mollan	Նորվեգիա
Carl Petersen	Նորվեգիա
Eldrid Roeine	Նորվեգիա
Marte Sinderud	Նորվեգիա
Michal Azarkiewicz	Լեհաստան
Mariusz Gołdysiak	Լեհաստան
Kaja Krawczyk	Լեհաստան
Slawomir Misiak	Լեհաստան
Ewa Polak	Լեհաստան
Marcin Prengowski	Լեհաստան
Agnieszka Rutkowska	Լեհաստան
Marzena Gabriela Ryszkowska	Լեհաստան
Adam Sauer	Լեհաստան
Agnieszka Stankiewicz	Լեհաստան
Paulina Szycko	Լեհաստան
Karina Wegrzynowska	Լեհաստան
Łukasz Żygadło	Լեհաստան
Luminita Ciobanu	Ռումինիա
Calin Radu	Ռումինիա
Laurentiu Vlad	Ռումինիա
Kristina Bogdanova	Ռուսաստանի Դաշնություն
Andrei Borodin	Ռուսաստանի Դաշնություն
Yury Boychenko	Ռուսաստանի Դաշնություն
Sergei Chashchikhin	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Degtyarev	Ռուսաստանի Դաշնություն
Olesya Dikun	Ռուսաստանի Դաշնություն
Igor Ermolenko	Ռուսաստանի Դաշնություն
Anastasiia Gaidalenok	Ռուսաստանի Դաշնություն
Dmitry Groshev	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Guz	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Ignatov	Ռուսաստանի Դաշնություն
Andrey Karbovskiy	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Kobrinskiy	Ռուսաստանի Դաշնություն
Vasily Korchmar	Ռուսաստանի Դաշնություն
Mikhail Krutikov	Ռուսաստանի Դաշնություն
Anastasiia Kupriianova	Ռուսաստանի Դաշնություն
Anna Lysenina	Ռուսաստանի Դաշնություն
Aleksei Malenko	Ռուսաստանի Դաշնություն
Alexander Mamin	Ռուսաստանի Դաշնություն
Aleksei Markov	Ռուսաստանի Դաշնություն
Andrei Molochkov	Ռուսաստանի Դաշնություն
Vladimir Novikov	Ռուսաստանի Դաշնություն
Sergey Overchenko	Ռուսաստանի Դաշնություն
Georgii Rubtsov	Ռուսաստանի Դաշնություն
Mikhail Shurgalin	Ռուսաստանի Դաշնություն
Aleksandra Simonova	Ռուսաստանի Դաշնություն
Evgeny Skobkarev	Ռուսաստանի Դաշնություն
Lev Tarskikh	Ռուսաստանի Դաշնություն
Konstantin Tasitc	Ռուսաստանի Դաշնություն
Svyatoslav Terentyev	Ռուսաստանի Դաշնություն
Alla Trimailova	Ռուսաստանի Դաշնություն

Ksenia Vinogradova	Ռուսաստանի Դաշնություն
Maria Vorozhtsova	Ռուսաստանի Դաշնություն
Petr Yakhmenev	Ռուսաստանի Դաշնություն
Sergey Zenkov	Ռուսաստանի Դաշնություն
Anna Zhurovich	Ռուսաստանի Դաշնություն
Andrei Ziuzin	Ռուսաստանի Դաշնություն
Alina Zolotareva	Ռուսաստանի Դաշնություն
Katarína Zembjaková	Սլովակիա
Tatjana Kovačič	Սլովենիա
María José De La Fuente Rivas	Իսպանիա
Mikael Andersson Elfgrén	Շվեդիա
Jonas Hult	Շվեդիա
Katrin Lindén	Շվեդիա
Lennart Myhlback	Շվեդիա
Nilsson Per	Շվեդիա
Erik Persson	Շվեդիա
Kristina Snoder	Շվեդիա
Ann-Sofie Sten	Շվեդիա
Zackie Birgitta Madeleine Ströje Wilkens	Շվեդիա
Hans-Ivar Swärd	Շվեդիա
Marco Battaglia	Շվեյցարիա
Fabrizio Mario Giuseppe Comandini	Շվեյցարիա
Annette Keller	Շվեյցարիա
Stefano Giordano Ottavio Lazzarotto	Շվեյցարիա
Barbara Egger Maldonado	Շվեյցարիա
Martin Minder	Շվեյցարիա
Tessa Nerini	Շվեյցարիա
Christine Beguelin Sargenti	Շվեյցարիա
Jon cristian Sandi	Շվեյցարիա
Fiona Anderson	Միացյալ Թագավորություն
Leslie Barnfield	Միացյալ Թագավորություն
Patricia Cavanagh	Միացյալ Թագավորություն
Christopher Damandl	Միացյալ Թագավորություն
Lewis Emmerton	Միացյալ Թագավորություն
George Fergusson	Միացյալ Թագավորություն
Leila Fitt	Միացյալ Թագավորություն
Alexander Folkes	Միացյալ Թագավորություն
Scott Martin	Միացյալ Թագավորություն
David Mcardle	Միացյալ Թագավորություն
Stephen Mcnamara	Միացյալ Թագավորություն
Eimear O'Casey	Միացյալ Թագավորություն
Andrea Aldrich	ԱՄՆ
Lyla Jamil Andrews Bashan	ԱՄՆ
Ethan Arnheim	ԱՄՆ
Joseph Brossart	ԱՄՆ
Benjamin Burnes	ԱՄՆ
Robert Downes	ԱՄՆ
Rachel Eschenbacher	ԱՄՆ
John Finkbeiner	ԱՄՆ
Jarret Fisher	ԱՄՆ
Jeffrey Gelman	ԱՄՆ
Mary-Margaret Hesse	ԱՄՆ
Robert Hyams	ԱՄՆ
Leo Jilk	ԱՄՆ
Tamara Kowalski	ԱՄՆ
Frank Albert Lavoie	ԱՄՆ

**Հայաստանի Հանրապետություն**

**2018թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ**

**ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց**

Tereza Lewis	ԱՄՆ
David-Sven Lindholm	ԱՄՆ
Kathryn Mclaughlin	ԱՄՆ
Thambydurai Muthukumaraswamy	ԱՄՆ
Tara O'Connor	ԱՄՆ
Robert Paullin, Jr	ԱՄՆ
Jeremy Pine	ԱՄՆ
Raleigh Quesenberry	ԱՄՆ
Michael Schuetz	ԱՄՆ
Steven Shapiro	ԱՄՆ
Miklos Solyom	ԱՄՆ
Bobbie Jo Traut	ԱՄՆ
Richard Wheeler	ԱՄՆ

**Երկարաժամկետ դիտորդներ**

**ԺՀՄԻԳ հիմնական թիմ**

Urszula Gacek	Առաքելության ղեկավար	Լեհաստան
Enira Bronitskaya		Բելառուս
Kerstin Dokter		Գերմանիա
László Belágyi		Հունգարիա
Goran Petrov		Հյուսիսային Մակեդոնիայի Հանրապետություն
Michał Gałkowski		Լեհաստան
Tomasz Janczy		Լեհաստան
Katarzyna Janki-Kowalczyk		Լեհաստան
Roman Railean		Ռումինիա
Saša Pokrajac		Սերբիա
Ranko Vukčević		Սերբիա
Robert Bystrický		Սլովակիա
Ivan Godarsky		Սլովակիա
Adolfo Cayuso-Martinez		Իսպանիա
Farrukh Juraqulov		Տաջիկստան
Barbara Davis		ԱՄՆ

**ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդներ**

Merete Laubjerg	Դանիա
Alexandre Benz	Ֆրանսիա
Sabine Ohayon	Ֆրանսիա
Nadia Yakhlaf-Lallemand	Ֆրանսիա
Kerstin Bröring	Գերմանիա
Thomas Oye	Գերմանիա
Suhail Ahmad	Իռլանդիա
Noemi Arcidiacono	Իտալիա
Cesira Damiani	Իտալիա
Nurul Rakhimbekov	Ղազախստան
Bojana Živković	Մոնտենեգրո
Toril Lund	Նորվեգիա
Anne Skatvedt	Նորվեգիա
Elzbieta Ciesielska	Լեհաստան
Knut Bergknut	Շվեդիա
Nicolas Heyum	Շվեդիա
Daniele D'Esposito	Շվեյցարիա

Հայաստանի Հանրապետություն

2018թ. դեկտեմբերի 9-ի Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ

ԺՀՄԻԳ Դիտորդական առաքելության վերջնական զեկույց

---

Loic Alexis Degen

Victor Pazinski

Ros Cornelis

Dominic Howell

Melanie Leathers

Shelley Mc Thomas

Marsha Weinermann

Շվեյցարիա

Շվեյցարիա

Նիդերլանդներ

Միացյալ Թագավորություն

Միացյալ Թագավորություն

ԱՄՆ

ԱՄՆ

## ԺՀՄԻԳ-ի ՄԱՍԻՆ

Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը (ԺՀՄԻԳ) ԵԱՀԿ հիմնական հաստատությունն է, որը կոչված է աջակցել մասնակից պետություններին «ապահովել մարդու իրավունքների և ազատությունների լիարժեք պահպանումը, համապատասխանել իրավունքի գերակայությանը, խթանել ժողովրդավարական սկզբունքները և (...) կառուցել, ամրապնդել ու պաշտպանել ժողովրդավարական հաստատությունները, ինչպես նաև բարձրացնել հասարակության շրջանում հանդուրժողականությունը» (1992թ. Հելսինկյան գազաթնաժողովի փաստաթուղթ): Սա կոչվում է ԵԱՀԿ մարդկային հարթություն:

Վարչավայում (Լեհաստան) տեղակայված ԺՀՄԻԳ-ը ստեղծվել է 1990թ. Փարիզյան գազաթնաժողովում, որպես Ազատ ընտրությունների գրասենյակ, և սկսել է գործել 1991թ. մայիսից: Մեկ տարի անց գրասենյակի անունը փոխվում է՝ արտացոլելու ընդլայնված մանդատը և ներառելու մարդու իրավունքներն և ժողովրդավարացումը: Այսօր այն ունի ավելի քան 150 աշխատակից:

ԺՀՄԻԳ-ը Եվրոպայում **ընտրությունների դիտարկման** ոլորտում առաջատար կազմակերպությունն է: Ամեն տարի այն համակարգում և կազմակերպում է հազարավոր դիտորդների գործուղում՝ գնահատելու, թե արդյոք ԵԱՀԿ տարածքում ընտրությունները իրականացվել են ԵԱՀԿ-ի առջև ստանձնած պարտավորություններին, ժողովրդավարական ընտրությունների միջազգային այլ պարտավորություններին ու չափանիշներին և ներպետական օրենսդրությանը համապատասխան: Նրա եզակի մեթոդաբան հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել ընտրական գործընթացներն իրենց ամբողջության մեջ: Աջակցության ծրագրերի միջոցով ԺՀՄԻԳ-ը օգնում է մասնակից պետություններին բարելավել իրենց ընտրական համակարգերը:

Գրասենյակի **ժողովրդավարացման** գործունեությունն ընդգրկում է իրավունքի գերակայությունը, օրենսդրական աջակցությունը, ժողովրդավարական կառավարումը, միգրացիան ու տեղաշարժման ազատությունը, գենդերային հավասարությունը: ԺՀՄԻԳ-ը ամեն տարի իրականացնում է մի շարք թիրախային աջակցության ծրագրեր՝ նպատակ ունենալով զարգացնել ժողովրդավարական կառույցները:

ԺՀՄԻԳ-ը նաև աջակցում է մասնակից պետություններին կատարել իրենց ստանձնած՝ **մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների** խթանման և պաշտպանության հետ կապված պարտավորությունները՝ ԵԱՀԿ մարդկային հարթության պարտավորություններին համահունչ կերպով: Դա ձեռք է բերվում տարբեր գործընկերների հետ համատեղ աշխատանքով՝ նպատակ ունենալով խթանել համագործակցությունը, զարգացնել կարողությունները և փորձաքննություն տրամադրել թեմատիկ ոլորտներում, որոնք ներառում են ահաբեկչության դեմ պայքարի համատեքստում մարդու իրավունքները, թրաֆիքինգի գոհերի ՄԻ պաշտպանության ամրապնդումը, ՄԻ ուսուցումն ու վերապատրաստումը, ՄԻ մշտադիտարկումն ու զեկուցումը և կանանց իրավունքներն ու անվտանգությունը:

**Հանդուրժողականության և խտրականության բացառման** ոլորտներում ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին տրամադրում է աջակցություն՝ ուժեղացնելու ատելության հիմքով հանցագործությունների և ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմականության և անհանդուրժողականության այլ դեպքերի դեմ իրենց պայքարը: Հանդուրժողականության և խտրականության բացառման ոլորտում ԺՀՄԻԳ-ի գործողությունները կենտրոնացած են հետևյալի վրա՝ օրենսդրություն, իրավապահ մարմինների վերապատրաստում, մշտադիտարկում, ատելության հիմքով հանցագործությունների և միջադեպերի մասին հաղորդում և դրանց դեմ պայքարի գործում հետևողականություն, ինչպես նաև հանդուրժողականության, հարգանքի և փոխըմբռնման խթանմանն ուղղված կրթական միջոցառումներ:

ԺՀՄԻԳ-ը մասնակից պետություններին խորհրդատվություն է տրամադրում **Ռումա և Մինթի** համայնքներին առնչվող իրենց քաղաքականության հարցում: Այն աջակցում է **Ռումա և Մինթի** համայնքների կարողությունների զարգացմանը և նրանց միջև փոխադարձ կապերի կառուցմանը, ինչպես նաև խրախուսում է **Ռումա և Մինթի** համայնքների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքականություն մշակող մարմիններում:

ԺՀՄԻԳ-ի բոլոր միջոցառումներն իրականացվում են ԵԱՀԿ մասնակից պետությունների, ԵԱՀԿ հաստատությունների և դաշտային առաքելությունների, ինչպես նաև միջազգային այլ կազմակերպությունների հետ սերտ համակարգմամբ և համագործակցությամբ:

Առավել մանրամասն տեղեկություններ հա սանելի են ԺՀՄԻԳ կայքէջում ([www.osce.org/odihr](http://www.osce.org/odihr))